



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ 25(339) «28» դեկտեմբերի 2017թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ	
329	««Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-56-Ն օրենքը.....	5
330	««Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-57-Ն օրենքը.....	16
331	««Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-58-Ն օրենքը.....	23
332	««Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-59-Ն օրենքը.....	30
333	««Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-60-Ն օրենքը.....	33
334	««Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-61-Ն օրենքը.....	34
335	««Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-62-Ն օրենքը.....	36
336	««Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-63-Ն օրենքը.....	37
337	««Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-64-Ն օրենքը.....	39

338	««Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-65-Ն օրենքը.....	41
339	««Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-66-Ն օրենքը.....	42
340	««Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-67-Ն օրենքը.....	43
341	««Առևտրի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-68-Ն օրենքը.....	44
342	««Դրամարկղային գործառնությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-69-Ն օրենքը.....	45
343	««Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-70-Ն օրենքը.....	46
344	««Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-71-Ն օրենքը.....	47
345	««Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-72-Ն օրենքը.....	48
346	««Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-73-Ն օրենքը.....	49
347	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-74-Ն օրենքը.....	57
348	««Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-75-Ն օրենքը.....	58
349	««Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-76-Ն օրենքը.....	64

350	«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ ՀՕ-78-Ն օրենքը.....	71
351	««Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-79-Ն օրենքը...	86
352	««Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-80-Ն օրենքը.....	87
353	««Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-81-Ն օրենքը.....	89
354	««Պետական կենսաթոշակների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-82-Ն օրենքը.....	90
355	««Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-83-Ն օրենքը.....	91
356	««Վիճակախաղերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-84-Ն օրենքը.....	92
357	««Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-85-Ն օրենքը.....	94
358	««Հարկային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-86-Ն օրենքը.....	95
359	««Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-87-Ն օրենքը.....	96
360	««Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-88-Ն օրենքը.....	98
ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ		
361	«Արցախի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմիններ ճանաչելու և Լեռնային	

	<p>Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 23-ի N 384-Ա ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի N 959-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 340-Ն որոշումը.....</p>	99
--	--	----

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի հունիսի 16-ի ՀՕ-23 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի՝

1) երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հարկային պարտավորությունը դադարում է՝

1) երբ այն կատարվում է.

2) երբ սահմանվում է հարկային պարտավորության գծով ազատման կամ նվազեցման հարկային արտոնություն՝ ազատված կամ նվազեցված պարտավորության չափով.

3) երբ իրավաբանական անձի կամ ֆիզիկական անձի սնանկության գործը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ավարտվում է, և բացակայում է որևէ անձ, որը, սույն օրենքի համաձայն, պատասխանատվություն է կրում հարկային պարտավորության կատարման համար.

4) երբ այն դառնում է անհուսալի և անհուսալի դառնալուց հետո՝ հինգ տարվա ընթացքում չի գանձվում.

5) երբ ֆիզիկական անձը մահանում է, եթե օրենսդրությամբ այլ բան չի սահմանված:».

2) երրորդ պարբերության «բ» կետում «500.000 դրամը» բառերը փոխարինել «1 000 000 ՀՀ դրամը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 23-րդ հոդվածի՝

1) առաջին պարբերությունից հանել «մինչև 90 օր (ներառյալ)» բառերը.

2) երկրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

3) երրորդ պարբերությունում «Նշված չափերով օրական տույժերը կիրառվում են» բառերը փոխարինել «Նշված չափով օրական տույժը կիրառվում է» բառերով:

Հոդված 3. Օրենքի 26-րդ հոդվածի չորրորդ պարբերությունում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Սույն պարբերությամբ նախատեսված տուգանքն արգելված գործունեություն իրականացնողների համար արգելված գործունեության մասով վերջնական հարկային պարտավորություն է:»:

Հոդված 4. Օրենքի 30-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հողված 30.

1. Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության (այսուհետ սույն հոդվածում՝ հարկային պարտավորություն) կատարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում հարկային մարմինն իրավունք ունի սահմանված կարգով դատարան ներկայացնել հայցադիմում՝ հարկ վճարողի գույքի բռնագանձման համար:

2. Չկատարված հարկային պարտավորության չափը 500 000 ՀՀ դրամ և ավելի կազմելու դեպքում՝ հարկային մարմնի ղեկավարն օրենքով սահմանված կարգով իրավունք ունի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագիր հրապարակել:

3. Հարկային մարմնի կողմից գույքի արգելանքը կարող է կիրառվել միայն հարկային պարտավորության կատարումն ապահովելու նպատակով: Արգելադրման ենթակա է միայն այն գույքը, որն անհրաժեշտ է հարկային պարտավորության կատարումն ապահովելու համար՝ հարկային պարտավորությունների չափով: Հարկային մարմնի կողմից գույքի արգելանքը դրվում է հարկ վճարողի գույքի վրա՝ անկախ այն հանգամանքից, թե ում մոտ է այն գտնվում: Արգելանքը չի կարող կիրառվել այն գույքի նկատմամբ, որի վրա օրենքով բռնագանձում չի կարող տարածվել, կամ որի պահպանման ժամկետն արգելադրման պահին պակաս է մեկ տարուց: Արգելանք չի կարող դրվել բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի, այդ թվում՝ կենսաթոշակային հիմնադրամների և ապահովագրական (վերաապահովագրական) ընկերությունների բանկային, դեպո կամ կենսաթոշակային հաշիվների և դրամական միջոցների վրա:

4. Գույքի արգելանքը հարկային պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկ վճարողի գույքային իրավունքների սահմանափակման միջոցով հարկային մարմնի կողմից իրականացվող գործողություն է: Արգելադրումն իրականացվում է բանկային հաշիվներում և (կամ) դրամարկղում առկա դրամական միջոցների արգելադրման, ինչպես նաև գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքի՝ հարկային պարտավորությունների չափով սահմանափակման միջոցով:

5. Գույքի վրա արգելանք դնելու մասին հարկային մարմնի ղեկավարը հանձնարարագիր է հրապարակում: Արգելանք դնելու մասին հանձնարարագրում նշվում են հանձնարարագիր հրապարակող պաշտոնատար անձի անունը, ազգանունը, պաշտոնը, հանձնարարագրի տրման տարին, ամիսը, ամսաթիվը, արգելանք դնող մարմնի անվանումը, գույքի արգելադրումն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, հարկ վճարողի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, չկատարված հարկային պարտավորության չափը և արգելանք դնելու իրավական հիմքերը: Արգելանք դնելիս հանձնարարագրի պատճենը ներկայացվում է հարկ վճարողին:

6. Հարկ վճարողի գույքի վրա արգելանքը կիրառվում է հետևյալ հերթականությամբ.

- 1) բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներ.
- 2) դրամարկղում առկա կանխիկ դրամական միջոցներ.
- 3) արգելանքի ենթակա այլ գույք:

7. Հարկ վճարողի գույքի արգելադրումն իրականացնող պաշտոնատար անձը գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագրի հիման վրա դրա

հրապարակումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին ընդունում է որոշում, որտեղ նշվում են որոշումն ընդունելու ամիսը, ամսաթիվը, վայրը, որոշումն ընդունած անձի պաշտոնը, անունը, ազգանունը, քննվող հարցը, հարկ վճարողի բանկային հաշիվներում կամ դրամարկղում առկա դրամական միջոցների արգելադրման դեպքում նաև արգելադրվող գումարի չափը, ընդունված որոշման հիմքերը՝ այն օրենքների կամ այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, որոնցով որոշում ընդունող անձը ղեկավարվել է այն ընդունելիս, քննվող հարցի վերաբերյալ եզրահանգումը:

8. Գույքի բացակայության, անբավարարության կամ հարկ վճարողի գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում արգելադրումն իրականացնող պաշտոնատար անձը կազմում է համապատասխան արձանագրություն: Արձանագրության օրինակելի ձևը սահմանում է հարկային մարմնի ղեկավարը:

9. Գույքի վրա արգելանք դնելիս այն իրականացնող պաշտոնատար անձը յուրաքանչյուր դեպքի համար որոշում է սահմանափակման տեսակները, ծավալները՝ հաշվի առնելով գույքի հատկանիշները, սեփականատիրոջ կամ տիրապետողի համար դրա նշանակությունը և հարկային պարտավորության չափը: Որպես գույքի արժեք ընդունվում է գույքի հաշվեկշռային արժեքը:

10. Հարկ վճարողը զգուշացվում է արգելադրած գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու դեպքում վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին:

11. Արգելանք դնելու մասին որոշումը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, կազմակերպությունների ու քաղաքացիների համար և ենթակա է կատարման Արցախի Հանրապետության ամբողջ տարածքում: Որոշման պատճենը ոչ ուշ, քան այն ընդունելու հաջորդ օրը պատշաճ ձևով ուղարկվում է հարկ վճարողին, ինչպես նաև՝ այլ անձանց ու մարմիններ:

12. Գույքի արգելադրումն իրականացնող պաշտոնատար անձը չի կարող արգելել հարկ վճարողի ներկայացուցչի մասնակցությունը գույքի արգելադրմանը: Սույն հոդվածի իմաստով հարկ վճարողի ներկայացուցիչ է համարվում այն անձը, որի լիազորությունները հաստատվում են Արցախի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

13. Գույքի արգելադրում կարող է իրականացվել ժամը 8:00-ից մինչև 18:00-ն:

14. Հարկ վճարողի գույքի արգելադրումն իրականացնող պաշտոնատար անձի՝ իր իրավասության սահմաններում գործողություններին խոչընդոտելու դեպքում արգելադրումն իրականացնող պաշտոնատար անձը խոչընդոտող հանգամանքները վերացնելու համար աջակցություն ստանալու նպատակով դիմում է իրավապահ մարմիններին և նրանց օժանդակությամբ շարունակում գույքի արգելադրման գործողությունները:

15. Սույն հոդվածով սահմանված կարգով արգելադրված գույքն արգելանքից հանվում է՝

1) արգելանք դնելուց հետո՝ երկամսյա ժամկետում, հարկային մարմնի կողմից հարկային պարտավորությունը բռնագանձելու վերաբերյալ դատարան հայց չներկայացվելու դեպքում.

2) հարկ վճարողի հարկային պարտավորությունը դադարելու կամ հարկ վճարողի կողմից հարկային պարտավորությունն ամբողջությամբ կատարվելու դեպքերում.

3) հարկ վճարողի հետ սույն հոդվածով սահմանված կարգով հարկային մարմնի կողմից հարկային պարտավորության կատարման վերաբերյալ աստիճանական մարման ժամանակացույց կնքելու դեպքում.

4) արգելանքով ապահովված հարկային պարտավորության գումարի բռնագանձման վերաբերյալ դատարան ներկայացված հայցի մերժման դեպքում:

16. Հարկային պարտավորության մարման նպատակով անհրաժեշտ գումարը համապատասխան գանձապետական հաշիվ մուտքագրվելուց հետո կամ սույն հոդվածով սահմանված կարգով աստիճանական մարման ժամանակացույցը կնքելուց հետո հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձը պարտավոր է ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, կարգադրություն ուղարկել համապատասխան անձանց և մարմիններին արգելանքը վերացնելու մասին: Բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների արգելադրման դեպքում նշված կարգադրությունը հարկային մարմնի կողմից սահմանված ժամկետում չներկայացվելու դեպքում հարկ վճարողն իրավունք ունի համապատասխան բանկ ներկայացնելու հարկային պարտավորության վճարման անդորրագիրը կամ հարկային պարտավորությունը մարելու վերաբերյալ աստիճանական մարման ժամանակացույցը, որից հետո տվյալ բանկը մեկ աշխատանքային օրվա ընթացքում արգելանքը վերացնելու վերաբերյալ հարցում է կատարում հարկային մարմին: Եթե բանկը հարցումն ուղարկելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հարկային մարմնից մերժում չի ստանում, ապա արգելանքը վերանում է:

17. Հարկային մարմինն արգելանքը վերացնելու վերաբերյալ հարցումը չի կարող մերժել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում՝

1) հարկային պարտավորության գումարը մուտքագրվել է կենտրոնական գանձապետարանի համապատասխան հաշվին.

2) հարկ վճարողի հետ կնքվել է հարկային պարտավորությունը մարելու վերաբերյալ աստիճանական մարման ժամանակացույց:

18. Արգելանք կիրառած անձինք և մարմինները պարտավոր են անհապաղ վերացնել իրենց կիրառած արգելանքը, եթե հարկ վճարողը ներկայացնում է հարկային պարտավորությունը լրիվ չափով վճարելը հավաստող անդորրագիրը կամ սույն հոդվածով սահմանված կարգով կնքված հարկային պարտավորության աստիճանական մարման ժամանակացույցը:

19. Գույքն արգելանքի վերցնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել որոշումը ստանալուց հետո երկամսյա ժամկետում: Գույքն արգելանքի վերցնելու մասին որոշման վարչական կամ դատական կարգով բողոքարկումը չի կասեցնում որոշման կատարումը:

20. Արգելանքի վերցված գույքը վատնելը, օտարելը, թաքցնելը, ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելը, փչացնելը կամ ոչնչացնելն արգելվում է:

21. Սույն հոդվածով սահմանված բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների արգելադրման գործընթացն իրականացվում է էլեկտրոնային համակարգի միջոցով, որի գործողության կարգը և պայմանները սահմանվում են Արցախի Հանրապետության կառավարության

որոշմամբ: Հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա արգելադրման որոշումը բանկերին և պետական մարմիններին ուղարկվում է էլեկտրոնային համակարգի միջոցով:

22. Առևտրային բանկերն անմիջապես արգելադրում են որոշման ստացման պահի դրությամբ հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա ազատ դրամական միջոցները՝ որոշմամբ նախատեսված հարկային պարտավորության գումարի չափով: Բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների արգելադրման մասին որոշմամբ առաջին հերթին արգելադրվում են ընթացիկ հաշիվները՝ Հայաստանի Հանրապետության դրամով, դրանց վրա դրամական միջոցների անբավարարության դեպքում ըստ հերթականության արգելադրվում են ընթացիկ հաշիվները՝ արտարժույթով, ավանդային հաշիվները՝ Հայաստանի Հանրապետության դրամով, ավանդային հաշիվները՝ արտարժույթով:

23. Հարկ վճարողի բանկային հաշիվներում դրամական միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում առևտրային բանկերը պարտավոր են արգելանք դնել հարկ վճարողի բանկային հաշիվներում հետագայում մուտքագրվող միջոցների վրա՝ մինչև բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների արգելադրման մասին որոշմամբ նշված հարկային պարտավորության չափով գումարի ապահովումը կամ արգելադրման մասին որոշման ուժը կորցնելը կամ մինչև սույն հոդվածով նախատեսված արգելանքը հանելու դեպքերի ի հայտ գալը:

24. Այն դեպքում, երբ բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների արգելադրման արդյունքում արգելադրվում է հարկ վճարողի մեկից ավելի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցները, և արգելադրված ընդհանուր գումարը գերազանցում է հարկային պարտավորության չափը, կամ բանկային հաշիվներից որևէ մեկում առկա դրամական միջոցներով ապահովվում է հարկային պարտավորության չափը, ապա առևտրային բանկն իրավունք ունի հարկ վճարողի հանձնարարության հիման վրա տրամադրելու տեղեկատվություն տվյալ բանկում վարվող հարկ վճարողին պատկանող բանկային հաշիվներում առկա հարկային պարտավորության չափով արգելադրված գումարի վերաբերյալ: Նշված հանձնարարությունը ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, առևտրային բանկը պարտավոր է տեղեկատվություն տրամադրել հարկ վճարողի բանկային հաշիվները սպասարկող մյուս առևտրային բանկերին և հարկային մարմնին՝ իր մոտ վարվող տվյալ հարկ վճարողին պատկանող բանկային հաշիվներում առկա հարկային պարտավորության չափով արգելադրված գումարի վերաբերյալ: Նշված տեղեկատվությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած ձևով:

25. Եթե որևէ առևտրային բանկ այլ առևտրային բանկերից ստացված հաղորդագրությունների հիման վրա պարզում է, որ հարկ վճարողի այլ առևտրային բանկում (բանկերում) բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներն արգելադրված են նույն արգելադրման մասին որոշմամբ սահմանված գումարի չափով, ապա տվյալ առևտրային բանկը պարտավոր է հաղորդագրությունները ստանալուց հետո՝ առավելագույնը մեկ աշխատանքային օրվա ընթացքում, արգելանքից հանել իր մոտ վարվող հարկ վճարողի՝ տվյալ բանկային հաշիվներում առկա դրամական միջոցները:

Նշվածը չի վերաբերում այն առևտրային բանկերին, որոնք արգելադրման մասին որոշմամբ արգելադրված բանկային հաշիվների վերաբերյալ սույն հոդվածով սահմանված հաղորդագրություն են ուղարկել այլ առևտրային բանկի (բանկերի):

26. Այն դեպքում, երբ այլ առևտրային բանկերից ստացված հաղորդագրությունների հիման վրա պարզվում է, որ հարկ վճարողի՝ այլ առևտրային բանկում (բանկերում) բանկային հաշիվներում առկա արգելադրված դրամական միջոցները պակաս են արգելադրման մասին որոշմամբ սահմանված գումարի չափից, ապա տվյալ առևտրային բանկը պարտավոր է սույն հոդվածով սահմանված կարգով արգելանքից հանել միայն տվյալ բանկում և այլ բանկերում արգելադրման արդյունքում հարկային պարտավորության գումարը գերազանցող դրամական միջոցները՝ հիմք ընդունելով այլ առևտրային բանկից (բանկերից) ստացված հաղորդագրությունները:

27. Հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշումը, որում բացակայում է արգելադրման ենթակա գումարի հստակ չափը, ենթակա չէ կատարման:

28. Բանկային հաշիվներում հարկ վճարողի ունեցած դրամական միջոցների արգելադրման մասին որոշումը չի տարածվում պետական բյուջե վճարման ենթակա դրամական միջոցների փոխանցման վրա, և հարկ վճարողն իրավունք ունի այդ միջոցներից կատարելու փոխանցումներ պետական բյուջե, եթե այդ դրամական միջոցները գրավի առարկա չեն:

29. Հարկ վճարողի դրամարկղում ունեցած կանխիկ դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշումը հարկ վճարողին ներկայացնելու օրը որոշումն ընդունած հարկային մարմնի պաշտոնատար անձը գույքագրում է հարկ վճարողի դրամարկղում առկա կանխիկ դրամական միջոցները և դրանք, ինչպես նաև արգելանքի կիրառման ժամանակահատվածում հարկային պարտավորությունների սահմանում դրամարկղ մուտքագրվող կանխիկ դրամական միջոցներն արձանագրությամբ ի պահ է հանձնում հարկ վճարողին: Հարկ վճարողի դրամարկղում առկա կանխիկ դրամական միջոցների՝ արգելանքի տակ գտնվելու ժամանակահատվածում որոշում կայացրած հարկային մարմնի պաշտոնատար անձն իրավունք ունի ցանկացած ժամանակ գույքագրելու դրամարկղում դրամական միջոցների առկայությունը, ինչպես նաև մուտքագրված և ելքագրված դրամական միջոցների շարժը, որի արդյունքներով կազմվում է արձանագրություն: Դրամարկղում կանխիկ դրամական միջոցների կամ կանխիկ դրամական միջոցների շարժի գույքագրման արձանագրության ձևը սահմանում է հարկային մարմինը, որում նշվում են գույքագրման ամսաթիվը, ժամանակահատվածը, արգելանքի տակ գտնվող դրամական միջոցների արժույթը, արժեքը, քանակը, մուտքագրված դրամական միջոցների արժեքը և դրանց ստացման աղբյուրը, ելքագրված դրամական միջոցների արժեքը և ծախսման ուղղությունները, ի պահ հանձնվող դրամական միջոցների արժույթը, արժեքը, քանակը, գույքագրման ընթացքում դրամարկղային գործառնությունների կատարման դադարեցման ժամանակահատվածը, նշում՝ արգելանքի կիրառման ժամանակահատվածում հարկային պարտավորությունների սահմանում դրամարկղ մուտքագրվող դրամական միջոցների արգելանքի տակ գտնվելու և ի պահ ընդունելու

վերաբերյալ, գույքագրմանը մասնակցող անձանց տվյալներն ու ստորագրությունները: Նշված արձանագրությունները հարկ վճարողի դրամարկղում առկա կանխիկ դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշման անբաժանելի մասն են:

30. Դրամարկղում հարկ վճարողի ունեցած կանխիկ դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշումը չի տարածվում կանխիկ դրամական միջոցներից հարկ վճարողի ավանդային կամ ընթացիկ հաշիվներ կամ պետական բյուջե կատարվող վճարումների վրա, և հարկ վճարողն իրավունք ունի դրամարկղում առկա դրամական միջոցներից իր ավանդային կամ ընթացիկ հաշիվներին կամ պետական բյուջե վճարումներ կատարելու:

31. Հարկ վճարողի բանկային հաշվին մուտքագրված դրամական միջոցների նկատմամբ կիրառվում են սույն հոդվածով նախատեսված՝ բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ դրույթները:

32. Հարկ վճարողի այլ գույքի վրա արգելանք դնելիս կազմվում է արձանագրություն: Արձանագրությունում կամ դրա հավելվածում նկարագրվում և ըստ անվանումների նշվում են արգելադրվող գույքի անվանումը, քանակը, անհատական հատկանիշները, հաշվեկշռային արժեքները: Նշված արձանագրությունը հարկ վճարողի գույքի արգելադրման որոշման անբաժանելի մասն է:

33. Արգելադրումն իրականացնող պաշտոնատար անձն արգելանքի տակ դրված գույքն ի պահ է հանձնում հարկ վճարողին, որի վերաբերյալ համապատասխան նշում է կատարվում գույքի վրա արգելանք դնելու մասին արձանագրությունում, իսկ եթե հարկ վճարողը փորձում է արգելադրած գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնել, թաքցնել, ապօրինաբար մեկ ուրիշին հանձնել, փչացնել կամ ոչնչացնել, ապա գույքի պահատվությունը հանձնվում է նման գործունեություն իրականացնող մասնագիտացված կազմակերպությանը՝ պահատվության պայմանագրի հիման վրա: Պահատվության հետ կապված ծախսերը կատարում է հարկ վճարողը:

34. Այլ գույքի արգելադրման էլեկտրոնային համակարգի գործողության կարգը և պայմանները սահմանվում են Արցախի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինների համատեղ իրավական ակտով:

35. Սույն հոդվածով նախատեսված արգելադրման դեպքում առկա հարկային պարտավորության ոչ պակաս, քան 20 տոկոսը մարելուց հետո հարկային մարմնի ղեկավարն իրավունք ունի մնացած հարկային պարտավորությունը մարելու վերաբերյալ հարկ վճարողի հետ կնքելու հարկային պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց, որի տևողությունը կարող է սահմանվել մինչև մեկ տարի: Ընդ որում, եթե արգելադրման ընթացքում հարկ վճարողը դիմում է ժամանակացույց կնքելու համար և ներկայացնում է բավարար հիմքեր իր վճարունակության վերաբերյալ, ապա հարկային մարմնի ղեկավարը հարկ վճարողի հետ կնքում է հարկային պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց: Սույն մասով նախատեսված ժամանակացույց կնքելու լիազորությունը հարկային մարմնի ղեկավարը կարող է փոխանցել հարկային մարմնի այլ պաշտոնատար անձի:

36. Հարկային պարտավորության աստիճանական մարման ժամանակացույցով սահմանված յուրաքանչյուր վճարման ժամկետն ավելի քան 10 օրով խախտելու դեպքում հարկային մարմինը դադարեցնում է հարկային պարտավորության աստիճանական մարման ժամանակացույցը: Հարկային պարտավորության աստիճանական մարման ժամանակացույցը դադարեցնելու վերաբերյալ հարկային մարմինն ընդունում է որոշում, որի մասին օրենքով սահմանված կարգով ծանուցում է պարտապան անձին:

37. Հարկ վճարողի չկատարված հարկային պարտավորությունների գանձման նպատակով հարկային մարմինն իրավունք ունի պարտապանի (դեբիտորի) նկատմամբ պահանջի իրավունքի զիջման պայմանագրով ձեռք բերելու հարկ վճարողի պահանջի իրավունքը և ստացված գումարներն ուղղելու հարկ վճարողի հարկային պարտավորությունների մարմանը: Ընդ որում, հարկային մարմինն է անցնում իրավունքի անցման պահին առկա ծավալով հարկային պարտավորության (ներառյալ ապառքը և դրա նկատմամբ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերը) պահանջի իրավունքը, իսկ պահանջի իրացման պահին, հաշվի առնելով Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տույժերի հաշվարկման ժամկետները, կատարվում է հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

38. Որպես հարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոց հարկային մարմնի և հարկ վճարողի միջև կարող է կնքվել գրավի պայմանագիր՝ Արցախի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

39. Հարկային պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկային մարմինն ընդունում է երաշխիքներ, որոնք տրամադրում են բանկերը, վարկային կազմակերպությունները կամ ապահովագրական ընկերությունները (այսուհետ՝ երաշխիք տված անձ):

40. Երաշխիք տված անձը երաշխիքով հարկային մարմնի առջև պարտավորվում է կատարել հարկ վճարողի հարկային պարտավորությունները, եթե վերջինս սույն օրենքով սահմանված կարգով և երաշխիքով սահմանված ժամկետում չի կատարել իր հարկային պարտավորությունները՝ հարկային մարմնի կողմից երաշխիք տված անձին այդպիսի գրավոր պահանջ ներկայացնելու դեպքում: Երաշխիքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Արցախի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ և սույն օրենքով:

41. Երաշխիքով հարկային պարտավորությունների կատարման ժամկետը կարող է սահմանվել մինչև ինն ամիս ժամկետով, որը չի կարող գերազանցել երաշխիք տված անձի լիցենզիայի գործողության ժամկետի ավարտին նախորդող վեցերորդ ամսվա 1-ը:

42. Երաշխիքը չի կարող հետ կանչվել երաշխիք տված անձի կողմից:

43. Երաշխիքը հարկային մարմին է ներկայացվում երկու օրինակից, որում պետք է նշվեն՝

1) հարկ վճարողի հարկային պարտավորությունները և դրա մարման ժամկետը, որոնց պատշաճ կատարումն ապահովվում է երաշխիքով.

2) երաշխիքով ապահովված հարկային պարտավորությունները չկատարվելու դեպքում՝ հարկային մարմնի կողմից երաշխիք տված անձից

հարկային պարտավորությունների կատարում պահանջելու անվիճելի իրավունքը.

3) երաշխիքով ապահովված հարկային պարտավորությունների կատարման համար երաշխիք տված անձի մոտ դրամական միջոցների առկայության փաստը.

4) երաշխիքի գործողության ժամկետը.

5) երաշխիք տված անձի լիցենզիայի համարը և գործողության ժամկետը:

44. Երաշխիքի ձևը և լրացման կարգը սահմանում է հարկային մարմինը:

45. Հարկային մարմինը երաշխիքն ընդունելու կամ մերժելու նպատակով այն ուսումնասիրում է ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

46. Երաշխիքի ընդունումը մերժվում է, եթե՝

1) երաշխիքը չի համապատասխանում օրենքով և սույն հոդվածի 41-43-րդ մասերով սահմանված չափանիշներին.

2) երաշխիքի գործողության ժամկետը պակաս է երաշխիքով սահմանված հարկ վճարողի կողմից հարկային պարտավորությունների կատարման ժամկետից.

3) երաշխիքը տված անձի՝ օրենքով սահմանված գործունեությամբ զբաղվելու լիցենզիան կասեցված է կամ ուժը կորցրած է ճանաչված.

4) երաշխիք տված անձն ունի չմարված հարկային պարտավորություններ:

47. Երաշխիքի ընդունման կամ մերժման վերաբերյալ հարկային մարմինը համապատասխան գրառում է կատարում տրված երաշխիքի համապատասխան դաշտում և դրա մեկ օրինակը սույն հոդվածի 45-րդ մասով սահմանված ժամկետում ուղարկում է երաշխիքը տված անձին: Երաշխիքի ընդունումը մերժելու դեպքում հարկային մարմինը նշում է նաև մերժման համար հիմք համարվող պատճառները:

48. Հարկ վճարողի կողմից երաշխիքով սահմանված ժամկետում երաշխիքով ապահովված հարկային պարտավորությունների չկատարման կամ մասնակի կատարման դեպքում հարկային մարմինը երաշխիքով սահմանված հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, երաշխիք տված անձին ներկայացնում է գրավոր պահանջ՝ երաշխիքով ապահովված հարկային պարտավորությունների կատարման համար:

49. Երաշխիք տված անձի կողմից երաշխիքով ապահովված՝ պարտապան հարկ վճարողի կողմից չկատարված հարկային պարտավորությունները ենթակա են կատարման այդպիսի պահանջը հարկային մարմնից ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

50. Երաշխիք տված անձի կողմից սույն հոդվածի 49-րդ մասում նշված ժամկետում իր պարտավորությունների չկատարման կամ մասնակի կատարման դեպքում հարկային մարմինը սահմանված կարգով դատարան է ներկայացնում հայցադիմում՝ գույքի բռնագանձման համար: Մինչև գումարի բռնագանձման վերաբերյալ դատարան հայցադիմում ներկայացնելը հարկային մարմինը երաշխիք տված անձի նկատմամբ կարող է կիրառել օրենքով նախատեսված հարկային պարտավորությունների հարկադիր կատարման ընթացակարգերը:»:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 30.1-ին հոդվածով.

«Հոդված 30.1.

1. Հարկային մարմինն Արցախի Հանրապետության կառավարության սահմանած ձևով և կարգով հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է՝

1) մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ը՝

ա. հաշվետու տարվա արդյունքներով 1 000 000 ՀՀ դրամ և ավելի հարկային վնասներ հայտարարագրած և ապառքներ կուտակած հարկ վճարողների ցանկերը,

բ. հաշվետու տարվա արդյունքներով Արցախի Հանրապետության պետական բյուջե 10 000 000 ՀՀ դրամ և ավելի շահութահարկ վճարած հարկ վճարողների ցանկերը,

գ. հաշվետու տարվա արդյունքներով Արցախի Հանրապետության պետական բյուջե 10 000 000 ՀՀ դրամ և ավելի եկամտային հարկ վճարած հարկային գործակալների ցանկերը,

դ. աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցած հարկ վճարողների ցանկերը.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ առաջին 300 խոշոր հարկ վճարողների ցանկերը և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված հարկերի մեծությունները՝ հաշվարկված աճողական կարգով:»:

Հոդված 6. Օրենքի տեքստում, N 1 և N 2 հավելվածներում, բացառությամբ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքով», ««Մասնկության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Հարկերի մասին» և առանձին հարկատեսակների մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Նոտարիատի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Առևտրի հարկի մասին», «Հաստատագրված վճարների մասին» և «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Առևտրի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Հարկային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1997 թվականի մարտի 17-ի օրենքը», ««Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Հսկիչ-դրամարկային

մեքենաների կիրառման մասին», «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին», «Դրամարկղային գործառնությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» և «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Դրամարկղային գործառնությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 7. Օրենքի N 1 հավելվածի 17-րդ գլխից հանել «`համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ» բառերը:

Հոդված 8.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:
2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վճարման ժամկետին հաջորդող 365 օրը չլրացած հարկի չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից շարունակվում է ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,075 տոկոսի չափով` մինչև վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրանալը:

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ`**

Բ. ՄԱՀԱԿՑԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-56-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1999 թվականի հունվարի 9-ի ՀՕ-47 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Սույն օրենքի իմաստով եկամուտ չեն համարվում հարկային պարտավորությունների կատարմանն ուղղվող՝ պետական կամ համայնքային բյուջեից տրամադրվող գումարները:»:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածում վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» կետ.

«գ/ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների լուծարման ծախսերը, ինչպես նաև լուծարվող հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները:»:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում՝

ա. «ա» կետում «փոխանցող հարմարանքների» բառերը փոխարինել «անշարժ գույքի միավոր համարվող գծային ինժեներական ենթակառուցվածքների (էլեկտրահաղորդման և կապի համակարգերի (այդ թվում՝ օդային և ստորգետնյա մալուխային գծերի) և դրանց հենասյուների, ջրարբիացման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի, գազատարների և ջերմամատակարարման համակարգերի, ոռոգման համակարգերի, ջրամբարների)» բառերով,

բ. «բ» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «բ.1»-ին կետ.

«բ.1/ արտադրական սարքավորումների համար՝ 5 տարի»,

գ. «ե» կետում «5» թիվը փոխարինել «8» թվով.

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Հարկվող շահույթը որոշելու նպատակով հարկատուն իր հայեցողությամբ կարող է ընտրել հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն այլ ժամկետներ (այդ թվում՝ ինչպես տվյալ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի համար առաջին անգամ ամորտիզացիոն մասհանում հաշվարկելու պահին, այնպես էլ դրանից հետո), սակայն հիմնական միջոցների տվյալ խմբի համար սույն հոդվածի 2-րդ մասով, իսկ ոչ նյութական ակտիվների համար՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետներից ոչ պակաս չափով: Սույն մասով սահմանված դեպքերում յուրաքանչյուր անգամ տվյալ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի ամորտիզացիոն ժամկետը վերանայելուց հետո ամորտիզացիոն

մասհանման գումարը հաշվարկվում է հաշվետու տարվա կտրվածքով (հաշվի առնելով նաև սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթները)՝ որպես տվյալ հիմնական միջոցի և ոչ նյութական ակտիվի՝ մինչև ամորտիզացիոն ժամկետի վերանայումն առկա հաշվեկշռային արժեքի և վերանայված ամորտիզացիոն ժամկետների հիման վրա հաշվարկված՝ ամորտիզացիոն մնացորդային ժամկետների հարաբերություն:»:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) «ե» կետում «հովանավորչական» բառից հետո լրացնել «, խորհրդատվական» բառը.

2) «ժե» կետում վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժզ» կետ.

«ժզ/ բանկ և վարկային կազմակերպություն չհամարվող սուբյեկտներից ներգրավված փոխառությունների գծով հաշվետու տարվա ընթացքում հաշվարկվող տոկոսների գումարների այն մասը, որը հաշվետու տարվա արդյունքներով գերազանցում է՝

- շահութահարկ վճարողի (բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների)՝ հաշվետու տարվա վերջին օրվա դրությամբ առկա սեփական կապիտալի դրական մեծության կրկնապատիկը,

- բանկ կամ վարկային կազմակերպություն համարվող շահութահարկ վճարողի՝ հաշվետու տարվա վերջին օրվա դրությամբ առկա սեփական կապիտալի դրական մեծության իննապատիկը:»:

Հոդված 5. Օրենքի 24-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 24. Անհատույց ստացված ակտիվները

1. Սույն օրենքի իմաստով անհատույց ստացված ակտիվները (բացառությամբ դրամական միջոցների և հողամասերի) եկամուտ են համարվում այն հաշվետու տարում, երբ դրանք ճանաչվում են որպես ծախս կամ կորուստ՝ անկախ այդ ծախսը կամ կորուստը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից:

2. Սույն օրենքի իմաստով դրամական միջոցները եկամուտ են համարվում դրանց ստացման հաշվետու տարում, բացառությամբ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում ստացված նպատակային դրամական միջոցների, որոնք եկամուտ են համարվում այն հաշվետու տարում, երբ այդ դրամական միջոցները կամ այդ դրամական միջոցներով ձեռք բերված, կառուցված, ստեղծված կամ մշակված ակտիվները ճանաչվում են որպես ծախս՝ անկախ այդ ծախսը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից: Պետության կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում որպես արդեն իսկ կատարված ծախսերի կամ ստացված վնասների փոխհատուցում ստացված նպատակային դրամական միջոցները եկամուտ են համարվում դրանց ստացման հաշվետու տարում:

3. Սույն օրենքի իմաստով հողամասերը եկամուտ են համարվում տասը հաշվետու տարիների ընթացքում, ներառյալ՝ դրանց ստացման հաշվետու տարին՝ յուրաքանչյուր հաշվետու տարում հավասարաչափ: Եթե սույն մասով սահմանված ժամանակահատվածում անհատույց ստացված հողամասն

օտարվում է, ապա հողամասի արժեքի՝ դեռևս եկամուտ չհամարված մասը եկամուտ է համարվում հողամասի օտարման հաշվետու տարում:

Սույն հողվածի դրույթները կիրառվում են նաև դատարանի որոշումների հիման վրա տիրագուրկ ճանաչված ակտիվի սեփականության իրավունքի ճանաչման դեպքերում:»:

Հոդված 6. Օրենքի 29-րդ հոդվածի «ժ» կետում «մինչև դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով:

Հոդված 7. Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «(բացառությամբ տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման)» բառերը:

Հոդված 8. Օրենքի 42-րդ հոդվածի «գ» կետում վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ», «ե», «զ» և «է» կետեր.

«դ/ շահաբաժինների տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված բաժնետերերի (փայտերերի) ժողովի կողմից հաշվետու տարվա գործունեության արդյունքներով ստացված շահույթից շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունման օրը.

ե/ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի օտարումից եկամուտը հաշվարկվում է դրանց համար գույքահարկով և հողի հարկով հարկման բազայից (հարկվող օբյեկտից) ոչ պակաս չափով: Այդ չափից պակաս հատուցման (առանց ավելացված արժեքի հարկի) դեպքում գույքահարկով և հողի հարկով հարկման բազայի (հարկվող օբյեկտի) և փաստացի հատուցման գումարի (առանց ավելացված արժեքի հարկի) դրական տարբերությունը՝ որպես ներված պարտավորություն, գործարքի կատարման օրը ներառվում է նոր սեփականատիրոջ եկամուտների մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարողը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ, որի դեպքում նոր սեփականատիրոջ մոտ ներված պարտավորություն չի առաջանում.

զ/ շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքների մասով եկամուտը հաշվարկվում է դրանց համար գույքահարկով և հողի հարկով հարկման բազայի (հարկվող օբյեկտի), իսկ դրա բացակայության դեպքում՝ գույքահարկով և հողի հարկով հարկվող օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված մակերեսի տեսակարար կշռին համապատասխանող հարկման բազայի (հարկվող օբյեկտի) հինգ տոկոսից ոչ պակաս չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ չափից պակաս հատուցման (առանց ավելացված արժեքի հարկի) դեպքում գույքահարկով և հողի հարկով հարկման բազայի (հարկվող օբյեկտի), իսկ դրա բացակայության դեպքում՝ գույքահարկով և հողի հարկով հարկման օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված մակերեսի տեսակարար կշռին համապատասխանող հարկման բազայի (հարկվող օբյեկտի) հինգ տոկոսի և փաստացի վարձակալական վճարի (առանց ավելացված արժեքի հարկի) դրական

տարբերությունը՝ որպես ներված պարտավորություն, սույն հոդվածի «գ» կետով սահմանված պահին ներառվում է վարձակալի կամ փոխառուի եկամուտների մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ վարձատուն կամ փոխառուն հանդիսանում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ, որի դեպքում վարձակալի կամ փոխառուի մոտ ներված պարտավորություն չի առաջանում:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում սույն կետով սահմանված գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու և (կամ) այդ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը դադարեցվելու դեպքում այդ հաշվետու ժամանակաշրջանում նշված գործարքների մասով եկամուտը հաշվարկվում է որպես սույն կետի առաջին պարբերությամբ որոշված եկամտի և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու օրերի հաշվետու ժամանակաշրջանում ներառվող օրերի մեջ ունեցած տեսակարար կշռի արտադրյալ:

Սույն կետի դրույթները չեն կիրառվում, եթե սույն կետով սահմանված գույքային միավորների օտարման կամ վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով):

Է/ եթե Արցախի Հանրապետության կառավարության սահմանած ապրանքատեսակների մատակարարման գործարքների մասով ապրանքի մատակարարման դիմաց հատուցման ենթակա գումարը, կնքված պայմանագրի համաձայն, ենթակա է ճշտման՝ ճշգրտվող տվյալների (ապրանքի վերջնական քանակի, որակական հատկանիշների) հիման վրա՝ ապրանքն ստանալուց կամ դրա վերամշակումն ավարտելուց հետո, ապա այդ ապրանքի մատակարարման դեպքում եկամուտը որոշվում է օտարերկրյա բորսայի կամ հանդեսի կողմից հրապարակվող տվյալներով որոշվող՝ ապրանքի միավորի հաշվարկային գնի և տվյալ ապրանքի մատակարարման պայմանագրով նախատեսվող ճշգրտվող տվյալների (մասնավորապես՝ ապրանքի վերջնական քանակի, որակական հատկանիշների) հիման վրա (անկախ վերջնահաշվարկի արդյունքում վճարման ենթակա հատուցման գումարից): Սույն կետի կիրառության իմաստով՝

- եկամտի որոշման նպատակով ճշգրտվող տվյալները, դրանց ճշգրտման առավելագույն սահմանները, ինչպես նաև ապրանքի միավորի հաշվարկային գնի որոշման կարգը (ներառյալ հաշվարկային գնի որոշման պարբերականությունը) սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը,

- ապրանքի մատակարարման գործարքների դեպքում ապրանքի մատակարարման դիմաց եկամտի ավելացումը կամ պակասեցումը ներառվում է ապրանքի մատակարարման դիմաց եկամտի վերջնական գումարը հայտնի դառնալու օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող շահութահարկի հաշվարկում՝ որպես եկամտի ավելացում կամ պակասեցում:»:

Հոդված 9. Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքի իմաստով արտաքին տնտեսական գործունեություն է համարվում՝

1) ոչ ռեզիդենտի կողմից ռեզիդենտ շահութահարկ վճարողին ապրանքի մատակարարումը, եթե այդ ապրանքի ներմուծման փաստաթղթերով (այդ թվում՝ ներմուծման հարկային հայտարարագրով կամ ներմուծման մաքսային հայտարարագրով) հիմնավորվում է, որ ներմուծումը կատարվել է ռեզիդենտ շահութահարկ վճարողի անունով՝ անկախ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքն Արցախի Հանրապետության տարածքում փոխանցվելու հանգամանքից.

2) սույն մասի 1-ին կետով սահմանված՝ ապրանքի մատակարարման գործարքի հետ ուղղակիորեն կապված՝ ապրանքների փաթեթավորման, բեռնման, տրանսպորտային, բեռնաթափման, ուղեկցման, ապահովագրության և համանման այլ աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը, եթե այդ աշխատանքները կատարվել և (կամ) ծառայությունները, ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն, մատուցվել են ապրանքը մատակարարող ոչ ռեզիդենտի կողմից.

3) ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից Արցախի Հանրապետության տարածքից դուրս ռեզիդենտին կամ մշտական հաստատության միջոցով Արցախի Հանրապետությունում գործունեություն իրականացնող այլ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին ապրանքի մատակարարումը:»:

Հոդված 10. Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասում «ղարաբաղյան» բառը փոխարինել «արցախյան» բառով:

Հոդված 11. Օրենքի 62-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 62. Աղբյուրի մոտ շահութահարկի պահումը

1. Սույն օրենքի 55-րդ հոդվածի համաձայն՝ աղբյուրի մոտ շահութահարկի պահումը (գանձումը) իրականացնում է հարկային գործակալը՝ ոչ ռեզիդենտին վճարվող (ներառյալ՝ կանխիկ կամ անկանխիկ փողային վճարման, այդ թվում՝ մաս-մաս կատարված վճարման՝ անկախ եկամտի ստացման իրավունքը ծագած լինելու հանգամանքից, այլ գույքով հատուցման, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվանցման, պարտքերի վերաձևակերպման կամ պարտքերի նորացման, ինչպես նաև արցախյան աղբյուրներից ստացման ենթակա եկամուտների մասով հարկային գործակալի նկատմամբ ոչ ռեզիդենտի կողմից հարկային գործակալ չհանդիսացող անձին պահանջի իրավունքի զիջման, եկամտի ստացման պահանջի ներման, սույն օրենքի 42-րդ հոդվածի «դ» կետով սահմանված՝ շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունման դեպքերում) եկամտի ընդհանուր գումարից:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ կանխիկ կամ անկանխիկ փողային վճարումները, համապատասխան գործարքը չկատարվելու հանգամանքով պայմանավորված, վերադարձվում են՝

1) մինչև այդ վճարումների կատարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային գործակալի կողմից սույն օրենքի 64-րդ հոդվածով սահմանված՝ նախորդ հաշվետու եռամսյակում ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից

հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկի փաստացի ներկայացումը, բայց ոչ ուշ, քան այդ հաշվարկի ներկայացման համար սույն օրենքի 64-րդ հոդվածով սահմանված վերջնաժամկետը, ապա համարվում է, որ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին եկամուտ չի վճարվել:

2) այդ վճարումների կատարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային գործակալի կողմից սույն օրենքի 64-րդ հոդվածով սահմանված՝ նախորդ հաշվետու եռամսյակում ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին հաշվարկի ներկայացումից հետո, ապա հարկային գործակալը կարող է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով հարկային մարմին ներկայացնել ճշտված հաշվարկ:»:

Հոդված 12. Օրենքի 67-րդ հոդվածի երրորդ պարբերությունում «վնասն» բառը փոխարինել «վնասը (առանց հաշվի առնելու նախորդ տարիներից փոխանցվող հարկային վնասի մեծությունը)» բառերով:

Հոդված 13. Օրենքի 69-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ:

«Հոդված 69. Օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերը

Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է Արցախի Հանրապետության հարկային մարմինը:»:

Հոդված 14. Օրենքի տեքստում, բացառությամբ ««Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության պետական կոմիտեի 1992 թվականի օգոստոսի 28-ի «Ձեռնարկությունների և կազմակերպությունների շահութահարկի մասին» թիվ 97 որոշումը» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 15.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

2. Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը ձեռք բերված (կառուցված, մշակված) և շահագործման հանձնված այլ հիմնական միջոցների 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատվածները սույն օրենքի ընդունումից հետո համարվում են համապատասխան հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետներ:

3. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետը տարածվում է 2017 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների վրա:

4. Օրենքի 42-րդ հոդվածի «դ» կետը և Օրենքի 62-րդ հոդվածը՝ ոչ ռեզիդենտի ստացած շահաբաժինների մասով, տարածվում են 2017 թվականի

հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող
շահաբաժինների վրա:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-57-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-86-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 23-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«23) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով իրականացվող՝ գովազդային վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները՝ յուրաքանչյուր շահման դեպքում 50000 ՀՀ դրամը չգերազանցող չափով, խաղարկությունով, ոչ խաղարկությունով և համակցված վիճակախաղերի մասնակիցների դրամական և իրային շահումները.»

2) 24-րդ կետում «տասը հազար դրամը» բառերը փոխարինել «50 000 ՀՀ դրամը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 9. Գրավ դրված գույքի օտարումից ստացվող եկամուտը

1. Ֆիզիկական անձի կողմից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի կողմից, եթե վերջինս որպես գրավատու հանդես է գալիս որպես անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ) գրավ դրված գույքը բռնագանձման արդյունքում (այդ թվում՝ հարկադիր կամ սնանկության աճուրդից գնման կամ հանձնման դեպքում) սեփականության իրավունքով գրավատու բանկին կամ վարկային կազմակերպությանն անցնելու դեպքում գրավատու ֆիզիկական անձի՝ գույքն օտարելուց ստացվող եկամուտ է համարվում գրավ դրված գույքի օտարման գնի և վարկային պարտավորության դրական տարբերությունը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությանն անցած (այդ թվում՝ պարտքի դիմաց ստացված)՝ գրավ դրված գույքը բանկի կամ վարկային կազմակերպության կողմից այդ գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, այդ գույքի նախկին սեփականատիրոջը (որի գույքի վրա տարածվել էր բռնագանձումը) կամ նրա իրավահաջորդին օտարելու դեպքում համարվում է, որ գրավատուն գույքն օտարելուց եկամուտ չի ստացել:

3. Արտադատական կարգով բռնագանձման արդյունքում բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությանն անցած՝ գրավ դրված գույքի

օտարումից ֆիզիկական անձին եկամուտների վճարման օր և օտարման գին են համարվում՝

1) բանկի կամ վարկային կազմակերպության կողմից այդ գույքի հետագա օտարման օրը և օտարման գինը, եթե այդ օտարումը տեղի է ունեցել գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: Ընդ որում, եթե գույքն օտարվել է օտարման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական գնից ողջամիտ չհամարվող ցածր գնով, ապա գույքի օտարման գին է համարվում օտարման օրվա դրությամբ այդ գույքի շուկայական գինը:

2) գույքն ի սեփականություն վերցնելուն հաջորդող վեցամսյա ժամկետի վերջին օրը և այդ օրվա դրությամբ գույքի շուկայական գինը, եթե այդ վեցամսյա ժամկետում գույքը չի օտարվել: Ընդ որում, բանկը կամ վարկային կազմակերպությունը պարտավոր է իր հաշվին ապահովել գույքի շուկայական գնի որոշումն անկախ գնահատողի կողմից:

4. Բռնագանձված գույքի նախկին սեփականատիրոջ կամ նրա իրավահաջորդի մասնակցությամբ քաղաքացիական, քրեական, սնանկության կամ վարչական գործի շրջանակներում բանկին կամ վարկային կազմակերպությանն ի սեփականություն անցած այդ գույքի վրա արգելանք դրվելու դեպքում սույն հոդվածով սահմանված վեցամսյա ժամկետի ընթացքը կասեցվում է արգելանքի տակ գտնվելու ամբողջ ժամկետով:

5. Բանկը կամ վարկային կազմակերպությունը և ֆիզիկական անձ գրավատուն կարող են համաձայնել, որ սույն հոդվածի 3-րդ մասի կիրառության իմաստով՝ գրավ դրված գույքի օտարման արդյունքում ֆիզիկական անձին եկամուտների վճարման օր և օտարման գին համարվեն այն բանկին կամ վարկային կազմակերպությանը ի սեփականություն անցնելու օրը և այդ օրվա դրությամբ անկախ գնահատողի որոշած շուկայական գինը: Սույն մասով սահմանված համաձայնությունը կնքվում է գրավոր:

6. Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ վարկային պարտավորություն է համարվում գրավ դրված գույքը բանկին կամ վարկային կազմակերպությանն ի սեփականություն անցնելու օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորությունը (այդ թվում՝ տոկոսները, տուժանքը, կատարման ժամկետի կետանցով պատճառված վնասները), ինչպես նաև գրավ դրված գույքը պահելու, պահպանելու, դրա վրա բռնագանձում տարածելու և օտարելու համար գրավառուի կատարած կամ կատարվելիք և գրավ դրված գույքի օտարման գնի 15 տոկոսը չզերագանցող ծախսերը:»:

Հոդված 3. Օրենքի 9.1-ին հոդվածի 4-րդ մասի՝

1) 1-ին կետում «օրվա դրությամբ» բառերից հետո լրացնել «հարկային գործակալին (հարկային գործակալի պարտավորությունից ազատված գործատուի վարձու աշխատողին)» բառերը:

2) 1-ին և 2-րդ կետերում «ամիսների համար» բառերից հետո լրացնել «հարկային գործակալի կողմից» բառերը:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն օրենքի իմաստով արտաքին տնտեսական գործունեություն է համարվում՝

1) ոչ ռեզիդենտի կողմից ռեզիդենտին ապրանքի մատակարարումը, եթե այդ ապրանքի ներմուծման փաստաթղթերով (այդ թվում՝ ներմուծման հարկային հայտարարագրով կամ ներմուծման մաքսային հայտարարագրով) հիմնավորվում է, որ ներմուծումը կատարվել է ռեզիդենտի անունով՝ անկախ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքն Արցախի Հանրապետության տարածքում փոխանցվելու հանգամանքից.

2) սույն մասի 1-ին կետով սահմանված՝ ապրանքի մատակարարման գործարքի հետ ուղղակիորեն կապված՝ ապրանքների փաթեթավորման, բեռնման, տրանսպորտային, բեռնաթափման, ուղեկցման, ապահովագրության և համանման այլ աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը, եթե այդ աշխատանքները կատարվել և (կամ) ծառայությունները, ապրանքի մատակարարման պայմանագրի համաձայն, մատուցվել են ապրանքը մատակարարող ոչ ռեզիդենտի կողմից.

3) ոչ ռեզիդենտի կողմից Արցախի Հանրապետության տարածքից դուրս ռեզիդենտին ապրանքի մատակարարումը:»:

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 8-րդ մասի՝

ա. առաջին պարբերությունից հանել երկրորդ նախադասությունը,

բ. երկրորդ, երրորդ և չորրորդ պարբերություններն ուժը կորցրած ճանաչել.

2) 8-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-8.4-րդ մասեր.

«8.1. Հարկման ընդհանուր համակարգում գտնվող գործունեության տեսակների մասով անհատ ձեռնարկատերերը եկամտային հարկը հաշվարկում և վճարում են տարեկան հարկվող եկամտի 21 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 60 000 ՀՀ դրամից:

8.2. Հարկման ընդհանուր համակարգում գտնվող, ինչպես նաև հաստատագրված վճարների և (կամ) առևտրի հարկի օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով անհատ ձեռնարկատերերը վճարում են նվազագույն եկամտային հարկ՝ ամսական 5000 ՀՀ դրամի չափով՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ):

Հարկային մարմինն գործունեություն չիրականացնելու (գործունեությունը դադարեցնելու) մասին հայտարարություն ներկայացրած և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը հայտարարությունը ներկայացնելուն հաջորդող ամսվանից մինչև գործունեությունը վերսկսելու ամիսն ընկած ժամանակահատվածի համար սույն մասով սահմանված չափով նվազագույն եկամտային հարկ չի վճարում:

8.3. «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով արտոնագրային վճար վճարող ֆիզիկական անձինք (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը) արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակների մասով եկամտային հարկ չեն հաշվարկում և չեն վճարում:

8.4. Հաշվետու ժամանակաշրջանում միաժամանակ և (կամ) հաջորդաբար հարկման տարբեր համակարգերով գործունեություն իրականացնելու դեպքում՝

1) հաստատագրված վճարների և (կամ) առևտրի հարկի կամ արտոնագրային վճարների օբյեկտ համարվող գործունեության տեսակներից ստացված (անհատ ձեռնարկատերերի համար՝ ստացման ենթակա) եկամուտները և այդ ժամանակահատվածին վերաբերող նվազեցումները, ինչպես նաև վճարված հաստատագրված վճարները, արտոնագրային վճարներն ու առևտրի հարկը հաշվի չեն առնվում հարկման ընդհանուր համակարգում գտնվող գործունեության տեսակների մասով հարկվող եկամուտը որոշելիս:

2) հարկման ընդհանուր համակարգում գտնվող, ինչպես նաև հաստատագրված վճարների և (կամ) առևտրի հարկի կամ արտոնագրային վճարների օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով անհատ ձեռնարկատերը վարում է եկամուտների և նվազեցումների առանձնացված հաշվառում (ըստ հարկման համակարգերի), իսկ ժամանակաշրջանի ծախսերը (որոնք ըստ հարկման համակարգերի հնարավոր չէ առանձնացնել) բաշխվում են՝ ելնելով ընդհանուր համախառն եկամտի մեջ հարկման տարբեր համակարգերում գտնվող գործունեության տեսակներից ստացված (ստացվող) եկամուտների տեսակարար կշիռներից (ըստ հարկման համակարգերի համախառն եկամուտների և նվազեցումների առանձնացված հաշվառում չվարելու դեպքում դրանց մեծությունը հարկային մարմնի կողմից որոշվում է «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով):»:

Հոդված 6. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հարկային գործակալները պարտավոր են սույն մասով սահմանված դեպքերում բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել աշխատողի (այդ թվում՝ վարձու աշխատողի) համար գրանցման հայտ (բացառությամբ Արցախի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց), որտեղ ներառվում են անհատական տեղեկություններ (անունը, ազգանունը, հայրանունը, բնակության (հաշվառման) վայրը, հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը), ինչպես նաև Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ տեղեկություններ, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի): Գրանցման հայտը ներկայացվում է՝

1) վարձու աշխատողին աշխատանքի ընդունելու (քաղաքացու հետ օրենքով սահմանված կարգով աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու) դեպքում.

2) վարձու աշխատողին աշխատանքից ազատելու (օրենքով սահմանված կարգով աշխատանքային հարաբերությունները դադարելու) դեպքում.

3) քաղաքացու հետ քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու, քաղաքացու հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելու (պայմանագիրը լուծելու, դադարելու) դեպքում.

4) Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված՝ վարձու աշխատողին չվճարվող արձակուրդ, մինչև երեք

տարեկան երեխայի խնամքի արձակուրդ տրամադրելու, այդ արձակուրդն ավարտվելու դեպքում.

5) սույն մասով սահմանված՝ գրանցման հայտի հիման վրա ներկայացված որևէ տվյալում (այդ թվում՝ վարձու աշխատողի պաշտոնին վերաբերող) փոփոխություն կատարելու դեպքում.

6) վերակազմակերպմամբ (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում) պայմանավորված՝ վարձու աշխատողների տեղափոխման դեպքում: Սույն կետով սահմանված դեպքում գրանցման հայտը ներկայացվում է օրենքով սահմանված կարգով իրավանախորդ և իրավահաջորդ ճանաչված գործատուների կողմից:

Հարկային գործակալները սույն մասի 1-ին կետով սահմանված գրանցման հայտը հարկային մարմին են ներկայացնում նոր աշխատողին աշխատանքի ընդունելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատողի կողմից աշխատանքը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը, իսկ սույն մասի 2-6-րդ կետերով սահմանված գրանցման հայտը հարկային մարմին են ներկայացնում մինչև հանգամանքն առաջանալու (հաշվետու) ամսվա համար եկամտային հարկի ամփոփ հաշվարկը ներկայացնելը:».

2) 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. Հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ, բացառապես էլեկտրոնային եղանակով, հարկային մարմին ներկայացնել՝ եկամտային հարկի ամփոփ հաշվարկ, որտեղ ներառվում են տվյալ հարկային գործակալից եկամուտներ ստացող (բացառությամբ միայն պասիվ եկամուտներ ստացողի և Արցախի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձի) ֆիզիկական անձանց համար հաշվարկված (քաղաքացիա-իրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց վճարված) եկամուտների, այդ եկամուտներից պահված եկամտային հարկի վերաբերյալ անհատական տեղեկություններ, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

Եկամտային հարկի ամփոփ հաշվարկում ներառվում են նաև հաշվետու ամսում պասիվ եկամուտներ ստացած Արցախի Հանրապետության ֆիզիկական անձանց և Արցախի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց, նրանց եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված և պահված եկամտային հարկի վերաբերյալ անհատական տեղեկություններ, բացառությամբ բանկային կամ ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկությունների:»:

Հոդված 7. Օրենքի 20-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «18.75 տոկոսի» բառերից հետո լրացնել «և տվյալ եռամսյակի յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված նվազագույն եկամտային հարկի գումարի դրական տարբերության» բառերը.

2) 3.1-ին մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կանխավճարի և նվազագույն եկամտային հարկի տարեկան հանրագումարը տվյալ տարվա փաստացի եկամտային հարկի (ներառյալ՝ նվազագույն եկամտային հարկի գումարը) 75 տոկոսից պակաս լինելու դեպքում հարկատուն վճարում է տույժ՝ փաստացի ստացված եկամտային հարկի (առանց նվազագույն եկամտային հարկի գումարի) 18,75 տոկոսի և տվյալ եռամսյակում փաստացի կատարված կանխավճարի (առանց նվազագույն եկամտային հարկի գումարի) տարբերության գումարի նկատմամբ՝ կանխավճարի վճարման համար սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված օրվանից մինչև հարկային մարմնին փաստացի եկամտային հարկի գումարը հայտնի դառնալու (տարեկան եկամուտների մասին հաշվարկը ներկայացնելու) օրը:»:

3) 5-րդ և 6-րդ մասերի առաջին նախադասություններում «փաստացի եկամտային հարկի» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ նվազագույն եկամտային հարկի)» բառերը, իսկ «կատարված կանխավճարների» բառերից հետո՝ «և նվազագույն եկամտային հարկի» բառերը:

Հոդված 8. Օրենքի 25-րդ հոդվածի՝

1) 3.1-ին մասում «2-րդ մասի երրորդ պարբերության 1-ին կետի» բառերը փոխարինել «2.1-ին մասի երկրորդ պարբերության» բառերով:

2) 5-րդ մասի՝

ա. առաջին պարբերությունում «եկամտային հարկ» բառերը փոխարինել «տուգանք» բառով,

բ. երկրորդ պարբերությունում «երկրորդ պարբերությամբ սահմանված ժամկետում գրանցման հայտ» բառերը փոխարինել «1-ին կետով սահմանված գրանցման հայտը նույն մասի երկրորդ պարբերությամբ նշված ժամկետում» բառերով:

Հոդված 9. Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասից հանել «՝ դրանք համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ» բառերը:

Հոդված 10. Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ, 10-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 12-րդ հոդվածի 1-ին մասերում «ղարաբաղյան» բառը փոխարինել «արցախյան» բառով:

Հոդված 11. Օրենքի տեքստում, բացառությամբ ««Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային բանկ «Արցախբանկ»-ում», ««Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Առևտրի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Եկամտահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1999 թվականի հունվարի 9-ի ՀՕ-46 և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

1998 թվականի ապրիլի 22-ի ՀՕ-13 օրենքները» և «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՑԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-58-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2003 թվականի մայիսի 21-ի ՀՕ-52 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում «դիզելային վառելիքը» բառերից հետո լրացնել «քսայուղը» բառը:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Ապրանքի մատակարարման անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում, եթե տվյալ ապրանքի մասով կիրառվում են սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված ակցիզային հարկի հաշվարկային (տոկոսային) դրույքաչափեր, ապա ակցիզային հարկով հարկման բազա է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկման բազա ընդունվող՝ սույն օրենքին համապատասխան որոշվող մեծության (գործարքի արժեքի, վճարի վարձատրության, պարզևի կամ այլ դրամական հատուցման մեծության), իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման պայմաններում գործող այլ հարկ վճարողի կողմից համեմատելի հանգամանքներում նույնանման գործարքների համար սովորաբար որպես հարկման բազա ընդունվող մեծության (գործարքի իրական արժեքի) 80 տոկոսը կազմող մեծությունը: Սույն մասի կիրառության իմաստով համարվում է, որ ակցիզային հարկով հարկվող օբյեկտ համարվող գործարքն իրականացվել է իրական արժեքից էականորեն ցածր արժեքով, եթե դրա հատուցման արժեքը (առանց ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի) 20 և ավելի տոկոսով ցածր է նույն, իսկ դրա բացակայության դեպքում՝ համանման ապրանքի մատակարարման գործարքի իրական արժեքից (առանց ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի):»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի աղյուսակում՝

ա. իններորդ և տասներորդ տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	2710 12	բենզին	1 տոննա	40 000 ՀՀ դրամ	
	2710 (բացառությամբ 2710 12, 2710 19 710 – 2710 19 980)	դիզելային վառելիք	1 տոննա	13 000 ՀՀ դրամ	»,

բ. տասներորդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

« 2710 19 710 – 2710 19 980, 3403 19 100 0, 3403 19 900 0, 3403 99 000 0	քսայուղ	մաքսային արժեք	50 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 կիլոգրամի համար՝ 400 ՀՀ դրամ	».
--	---------	-------------------	---	----

2) 5-րդ մասում «2208 ծածկագրին դասվող ապրանքների» բառերից հետո լրացնել «(բացառությամբ 40 տոկոս և բարձր սպիրտայնությամբ չջլալցված կոնյակի և չջլալցված կոնյակի սպիրտի)» բառերը.

3) 6-րդ մասում «112000» թվերը փոխարինել «135000» թվերով:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» կետ.

«գ) 40 տոկոս և բարձր սպիրտայնությամբ չջլալցված կոնյակի մատակարարումը կոնյակ արտադրող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց:»:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասից և 11-րդ հոդվածից հանել «՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ» բառերը:

Հոդված 6. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մաս.

«5. Ակցիզային դրոշմանիշների մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձևով կամ դրոշմավորման ենթակա ապրանքները ոչ այդ արտադրատեսակի դրոշմավորման համար տրամադրված ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված կամ որոշակի տարողության համար տրամադրված ակցիզային դրոշմանիշներով այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) տարայավորված, ինչպես նաև Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված՝ իրացման համար թույլատրելի ժամկետներից հետո որոշակի թվագրումով դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքներ օտարելու դեպքում, եթե օտարման համար նախատեսված վայրում գտնվող այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ նշված չլինելու դեպքում՝ սույն օրենքով սահմանված կարգով որոշված) գներով՝

1) չի գերազանցում 50000 ՀՀ դրամը, ապա հարկ վճարողը վճարում է տուգանք՝ հինգ հարյուր հազար ՀՀ դրամի չափով.

2) գերազանցում է 50000 ՀՀ դրամը, ապա հարկ վճարողը վճարում է տուգանք՝ ապրանքների ընդհանուր արժեքի 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան մեկ միլիոն ՀՀ դրամը:»:

Հոդված 7. Օրենքի տեքստում, բացառությամբ «Ակցիզային հարկի մասին» և 1999 թվականի դեկտեմբերի 31-ի «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 8.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն ընկած յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի մեկից ավելի ճշտված հաշվարկ ներկայացնելու դեպքում Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տուգանքը չի կիրառվում:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՑԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-59-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 19-ի ՀՕ-27 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված գործունեության տեսակների մասով, բացառությամբ «ժգ», «ժդ», «ժդ¹», «ժէ», «ժը» կետերով նախատեսված գործունեության տեսակների, հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս (բացառությամբ Ստեփանակերտ քաղաքի) լրացուցիչ կիրառվում է 0,5 գործակից»:

Հոդված 2. Օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությունում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության հարկային մարմինը» բառերով:

Հոդված 3. Օրենքի 101-րդ հոդվածում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության հարկային մարմինը» բառերով:

Հոդված 4. Օրենքի տեքստում, բացառությամբ «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», «Շահումով խաղերի և խաղատների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» և «Վիճակախաղերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:
2. Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված գործակիցը կիրառվում է 2018 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների համար հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-60-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2011 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-91-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.3-րդ մաս.

«3.3. Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով սույն օրենքի անբաժանելի մաս համարվող N 1 և N 2 հավելվածներով սահմանված արտոնագրային վճարի չափը հաշվարկելիս շրջկենտրոններում և այլ վայրերում կիրառվում է 0,5 գործակից:»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասում «2018 թվականի հունիսի 1-ը» բառերը փոխարինել «2021 թվականի հունվարի 1-ը» բառերով:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության հարկային մարմինը» բառերով:

Հոդված 4. Օրենքի N 2 հավելվածի 7-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« 7.	Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում, այդ թվում՝ մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով ավտոմեքենաների լվացում	x	45,0	35,0	25,0	»:
------	---	---	------	------	------	----

Հոդված 5. Օրենքի տեքստում, N 3 և N 4 հավելվածներում, բացառությամբ ««Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» և ««Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 6. Օրենքի N 5 և N 6 հավելվածներում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական

ծառայություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության հարկային մարմին» բառերով:

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:
2. Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված գործակիցը կիրառվում է 2018 թվականի (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս, տարի) համար արտոնագրային վճարի չափը հաշվարկելիս:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-61-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ՀՄԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ»
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՍՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 22-ի
ՀՕ-168 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ մասի «դ³» կետում «2018
թվականի» բառերը փոխարինել «2021 թվականի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում «Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական
ծառայության պետի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության
հարկային մարմնի ղեկավարի» բառերով:

Հոդված 3. Օրենքի տեքստում, բացառությամբ ««Հարկային ծառայության
մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», «Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքին համապատասխան», «Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի հավելված 2-ի դրույթները» և «Լեռնային
Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացված
ուսումնասիրության» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել
«Արցախի» բառով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-
ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-62-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2000 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-119 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 3-րդ մասի հինգերորդ պարբերությունում «հինգ աշխատանքային օրվա» բառերը փոխարինել «15 աշխատանքային օրվա» բառերով:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի երկրորդ պարբերությունում «չձևակերպված» բառից հետո լրացնել «և (կամ) առանց գրանցման հայտի» բառերը.

2) 3-րդ մասում «պայմանագրի» բառից հետո լրացնել «և (կամ) գրանցման հայտի ներկայացման» բառերը:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությունից առաջին նախադասությունը հանել:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի՝

1) առաջին պարբերությունում «մեկ տարվա ընթացքում կատարված» բառերը փոխարինել «ստուգված հաշվետու ժամանակաշրջանի ու ստուգված հարցերի» բառերով.

2) երկրորդ պարբերությունում՝

ա. «ա» կետն ուժը կորցրած ճանաչել,

բ. «դ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) եթե հարկային մարմնի ծառայողական քննության արդյունքներով կամ սահմանված կարգով օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել են նախորդ ստուգումն իրականացրած պաշտոնատար անձի (անձանց) անօրինական գործողությունները.»

գ. «ժա» կետում վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժբ» կետ.

«ժբ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան վերստուգում նշանակվելու դեպքում: Սույն կետում նշված վերստուգումներն իրականացվում են հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման հիման վրա՝ որոշմամբ նշված հարցերի և ժամանակաշրջանի շրջանակներում: Հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված որոշման պատճենը ստուգման հանձնարարագրի հետ միասին տրամադրվում է հարկ վճարողին կամ նրա պաշտոնատար անձին:».

3) երրորդ պարբերությունում ««ժ» և «Ժա» կետերով» բառերը փոխարինել ««ժ», «Ժա» և «ժբ» կետերով» բառերով:

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածի «զ» կետում «վերցնել փաստաթղթեր» բառերից առաջ լրացնել «իրականացնել տնտեսավարող սուբյեկտի տարածքների, շինությունների, փոխադրամիջոցների, փաստաթղթերի և առարկաների գնում, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում գնման ժամանակ իրականացնել լուսանկարում, տեսագրում,» բառերը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-63-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

«ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ (ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ) ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1999 թվականի փետրվարի 12-ի ՀՕ-52 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 2-րդ մասում «0.1» թիվը փոխարինել «0,075» թվով:

Հոդված 2. Օրենքի 12-րդ և 13-րդ հոդվածներում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության հարկային մարմինը» բառերով:

Հոդված 3. Օրենքի տեքստում և հավելվածում, բացառությամբ ««Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին», «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին», «Դրամարկղային գործառնությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» և «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Դրամարկղային գործառնությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» և ««Հարկային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 4. Օրենքի հավելվածի 16-րդ գլխից հանել «՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ» բառերը:

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վճարման ժամկետին հաջորդող 365 օրը չլրացած մասհանման չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից շարունակվում է ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,075 տոկոսի չափով՝ մինչև վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրանալը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-64-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-
133 օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերությունում «0.1» թիվը
փոխարինել «0,075» թվով:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:
2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վճարման ժամկետին հաջորդող 365 օրը չլրացած վճարների չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից շարունակվում է ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,075 տոկոսի չափով՝ մինչև վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրանալը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-65-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ
ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2007 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-125 օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասում «0,1» թիվը փոխարինել «0,075» թվով:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վճարման ժամկետին հաջորդող 365 օրը չլրացած կարգավորման պարտադիր վճարի չվճարված գումարների նկատմամբ տույժերի հաշվարկը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից շարունակվում է ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,075 տոկոսի չափով՝ մինչև վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրանալը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-66-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության 2004 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-104 օրենքի 34-րդ
հոդվածի առաջին և երրորդ պարբերություններում «0,1» թիվը փոխարինել
«0,075» թվով:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:
2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը վճարման ժամկետին հաջորդող
365 օրը չլրացած պետական տուրքի չվճարված գումարների նկատմամբ
տույժերի հաշվարկը սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից շարունակվում է
ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0,075 տոկոսի չափով՝ մինչև
վճարման ժամկետին հաջորդող 365 օրը լրանալը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-67-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ԱՌԵՎՏՐԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Առևտրի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2002 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-207 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասում «ղարաբաղյան» բառը փոխարինել «արցախյան» բառով:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածում «հարկային պետական վարչությունը» բառերը փոխարինել «հարկային մարմինը» բառերով:

Հոդված 3. Օրենքի տեքստում, բացառությամբ ««Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող մասհանումների (հատկացումների) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» և ««Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-68-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Դրամարկղային գործառնությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2004 թվականի հոկտեմբերի 20-ի ՀՕ-136 օրենքի տեքստում, բացառությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-69-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ՀՄԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԿԻՐԱՌՈՂՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի ՀՕ-15 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության հարկային մարմին» բառերով:

Հոդված 2. Օրենքի տեքստում, բացառությամբ ««Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» և ««Հարկային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-70-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՐԿԱՅԻՆ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2011 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-92-Ն օրենքի տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով, բացառությամբ ««Հարկային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին համապատասխան իրականացվող ստուգում» բառերի:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-71-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-2 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 14-րդ հոդվածի՝

- 1) 2-րդ մասում «բարձրագույն կոչումներ» բառերը փոխարինել «բարձրագույն, ինչպես նաև գնդապետի կոչումները» բառերով.
- 2) 3-րդ մասում՝
ա. հանել «գլխավոր» բառը,
բ. «կոչումներ» բառը փոխարինել «կոչումները» բառով:

Հոդված 2. Օրենքի 31-րդ հոդվածի՝

- 1) 2-րդ մասում «վարչապետը» բառը փոխարինել «կառավարությունը» բառով.

- 2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության ղեկավարի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը՝ Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության ղեկավարի ներկայացմամբ:»:

Հոդված 3. Օրենքի վերնագրում և տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը, բացառությամբ 5-րդ հոդվածի «Ժ» կետի, 32-րդ հոդվածի 10-րդ մասի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով» բառերի, 57-րդ հոդվածի 4-րդ մասի «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերի, 69-րդ հոդվածի 1-ին մասի, 106-րդ հոդվածի 6-րդ մասի և 107-րդ հոդվածի 2-րդ մասի, փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-72-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՈՒԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի մայիսի 25-ի ՀՕ-206 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9.1-ին հոդվածի 4-րդ մասում «9.1-9.7-րդ հոդվածների» բառերից հետո լրացնել «և 18-րդ հոդվածի 3-րդ մասի» բառերը:

Հոդված 2. Օրենքի 9.2-րդ հոդվածի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ	Ապրանքախմբի անվանումը	Ապրանքախմբի համառոտ անվանումը
0207	ընտանի թռչունների միս և սննդային ենթամթերք՝ 0105 ապրանքային դիրքում դասակարգված, թարմ, պաղեցրած կամ սառեցրած	միս
0209	անյուղ մսից առանձնացված չհալեցրած կամ այլ եղանակով չստացած ընտանի թռչունների ճարպ՝ թարմ, պաղեցրած, սառեցրած, աղ դրված, աղաջրի մեջ դրված, չորացրած կամ ապխտած	միս
0210	ընտանի թռչունների միս և մսից սննդային ենթամթերք՝ աղ դրված, աղաջրի մեջ դրված, չորացրած կամ ապխտած, մսից կամ մսի սննդային ենթամթերքից ստացված մանր և խոշոր աղացվածքի այլուր	միս
0401	կաթ և սերուցք՝ ոչ խտացված և առանց շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելման	կաթնեղեն
0402	կաթ և սերուցք՝ խտացված կամ շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելմամբ	կաթնեղեն
0403	թան, մակարդված կաթ և սերուցք, յոգուրտ, կեֆիր և այլ ֆերմենտացված կամ խմորված կաթ և սերուցք՝ խտացված կամ ոչ խտացված, շաքարի հավելմամբ կամ առանց շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելման, համաբուրային հավելումներով կամ առանց դրանց, մրգերի, ընկույզների կամ կակաոյի հավելմամբ կամ առանց դրանց	կաթնեղեն
0404	կաթնային շիճուկ՝ խտացրած կամ չխտացրած, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած, մթերք կաթի բնական բաղադրիչներից՝ շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ	կաթնեղեն

	չավելացրած, այլ տեղում չնշված կամ չներառված	
0405	կարագ և կաթից պատրաստված այլ ճարպեր ու յուղեր, կաթնային մածուկներ	կաթնեղեն
0406	պանրի տեսակներ և կաթնաշոռ	կաթնեղեն
0901	սուրճ՝ բոված կամ չբոված, կոֆեինով կամ առանց կոֆեինի, սուրճի կեղև և սուրճի հատիկների թաղանթ (պատյան), սուրճի փոխարինիչներ՝ ցանկացած համամասնությամբ սուրճ պարունակող	սուրճ
0902	թեյ՝ համաբուրային հավելումներով կամ առանց դրանց	թեյ
0903 00 000	մատե կամ պարագվայական թեյ	թեյ
1504	ձկան կամ ծովային կաթնաստուների ճարպեր, յուղեր և դրանց գտամասեր՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց փոփոխելու քիմիական կազմը	ճարպեր և յուղեր
1505	ճարպաքրտինք և դրանից ստացվող ճարպանյութեր (ներառյալ՝ լանոլինը)	ճարպեր և յուղեր
1506	կենդանական այլ ճարպեր, յուղեր և դրանց գտամասերը՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց փոփոխելու քիմիական կազմը	ճարպեր և յուղեր
1507	սոյայի ձեթ և դրա ֆրակցիաներ՝ ռաֆինացված կամ չռաֆինացված, սակայն առանց քիմիական բաղադրության փոփոխության	ձեթ
1508	գետնանուշի ձեթ և դրա ֆրակցիաներ՝ ռաֆինացված կամ չռաֆինացված, սակայն առանց քիմիական բաղադրության փոփոխության	ձեթ
1509	ձիթապտղի ձեթ և դրա խառնուրդամասեր՝ չզոված կամ զոված, բայց առանց քիմիական բաղադրության փոփոխության	ձեթ
1510 00	այլ յուղեր և դրանց գտամասերը, որոնք ստացվում են միայն կանաչ կամ սև ձիթապտղից չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց փոփոխելու քիմիական կազմը, ներառյալ՝ այդ յուղերի կամ գտամասերի խառնուրդներն ապրանքային 1509 դիրքում ընդգրկված յուղերի կամ դրանց գտամասերի հետ	այլ յուղեր
1512 11 910	արևածաղկի ձեթ	ձեթ
1512 19 900	արևածաղկի ձեթ	ձեթ
1515	այլ չցնդող բուսական ճարպեր, յուղեր (ներառյալ՝ ժոժոբայի յուղը) և դրանց գտամասերը՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց փոփոխելու քիմիական կազմը	ճարպեր և յուղեր
1516 20 960 2	խաղողի կորիզներից յուղ	յուղ
1517	մարգարին. սննդի մեջ օգտագործելու համար պիտանի խառնուրդներ կամ պատրաստի մթերք՝ կենդանական կամ բուսական ճարպերից կամ յուղերից կամ տվյալ խմբի տարբեր ճարպերի կամ յուղերի գտամասերից բացի 1516 ապրանքային դիրքում նշված սննդի ճարպերից կամ յուղերից կամ դրանց գտամասերից	մարգարին
1601	երշիկներ և մսից, մսային ենթամթերքից կամ արյունից պատրաստված համանման մթերք. դրանց հիմքով պատրաստված պատրաստի սննդամթերք	պատրաստի սննդամթերք
1602	մսից, մսային ենթամթերքից կամ արյունից պատրաստի կամ պահածոյացված այլ մթերք	մսեղեն

1603	լուծամզվածքներ և հյութեր մսից, ձկնից կամ խեցգետնանմաններից, կակղամարմիններից կամ ջրային այլ անողնաշարավորներից	պատրաստի սննդամթերք
1604	պատրաստի կամ պահածոյացված ձուկ, թառափագգինների խավիար և դրա փոխարինիչներ՝ պատրաստված ձկնկիթի հատիկներից	ձկնեղեն
1605	պատրաստի կամ պահածոյացված խեցգետնակերպեր, կակղամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ	ձկնեղեն
1806	շոկոլադ և կակաո պարունակող այլ պատրաստի սննդամթերք	կակաո և դրանից պատրաստված մթերք
1901	ածիկային լուծամզուք, պատրաստի սննդամթերք՝ պատրաստված մանր կամ խոշոր աղացվածքի ալյուրից, ձավարից, օսլայից կամ ածիկային լուծամզուքից՝ առանց կակաոյի պարունակության կամ 40% զանգվածային բաժնից պակաս կակաոյի պարունակությամբ ամբողջովին յուղազրկված հիմքի հաշվարկով, այլ տեղում չնշված կամ չներառված, 0401-0404 ապրանքային դիրքերում ընդգրկված հումքից ստացված պատրաստի սննդամթերք՝ առանց կակաոյի պարունակության կամ 5% զանգվածային բաժնից պակաս կակաոյի պարունակությամբ՝ ամբողջովին յուղազրկված հիմքի հաշվարկով, այլ տեղում չնշված կամ չներառված	խտացրած կաթ
1902	մակարոնային արտադրատեսակներ՝ ջերմային մշակման ենթարկված կամ չենթարկված, միջուկով (մսից կամ այլ մթերքից) կամ առանց միջուկի կամ այլ եղանակով պատրաստված, ինչպես օրինակ՝ սպագետտի, մակարոն, լապչա, եղջրիկներ, խմորագնդիկներ, ռավիոլա, կաննելոն, կուսկուս՝ պատրաստի կամ ոչ պատրաստի սննդի մեջ օգտագործելու համար	պատրաստի մթերք
1903	տապիոկ և դրա փոխարինիչները՝ պատրաստված օսլայից փաթիլների, հատիկների (գրանուլների), ձավարահատիկների, մանրահատիկների կամ նույնանման այլ տեսքով	պատրաստի մթերք
1904	պատրաստի սննդամթերք՝ ստացված հացաբույսերի հատիկները կամ հացահատիկային մթերքը (օրինակ՝ եգիպտացորենի փաթիլներ) փքելու կամ բովելու միջոցով, հացաբույսեր (բացի եգիպտացորենի հատիկներից)՝ հատիկի կամ փաթիլների տեսքով կամ այլ եղանակով մշակված հատիկի տեսքով (բացի մանր և խոշոր աղացվածքի ալյուրից, ձավարից)՝ նախապես եփած կամ այլ եղանակով պատրաստված, այլ տեղում չնշված կամ չներառված	պատրաստի մթերք
2001	բանջարեղեն, մրգեր, ընկույզներ և բույսերի այլ ուտելի մասեր՝ պատրաստված կամ պահածոյացված քացախի կամ քացախաթթվի հավելմամբ	պահածո
2002	լոլիկներ (պոմիդոր)՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի	պահածո
2003	սնկեր և գետնասնկեր՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման	պահածո

2004	այլ բանջարեղեն՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման, սառեցված, բացի 2006 ապրանքային դիրքում նշված մթերքից	պահածո
2005	այլ բանջարեղեն՝ պատրաստված կամ պահածոյացված առանց քացախի կամ քացախաթթվի հավելման, չսառեցված, բացի 2006 ապրանքային դիրքում նշված մթերքից	պահածո
2006	բանջարեղեն, մրգեր, ընկույզներ, պտուղների կեղև և բույսերի այլ մասեր՝ շաքարի միջոցով պահածոյացված (շաքարի օշարակով ներծծված, շաքարահյութով պատված, շաքարահյութով եփված, շաքարված)	պահածո
2007	ջեմեր, մրգային ժելե, մարմելադներ, մրգային կամ ընկույզի պյուրե, մրգային կամ ընկույզի մածուկ՝ ստացված ջերմային մշակումից, այդ թվում՝ շաքարի կամ այլ քաղցրացնող նյութերի հավելմամբ	պահածո
2008	մրգեր, ընկույզներ և բույսերի ուտելի այլ մասեր՝ պատրաստված կամ պահածոյացված այլ եղանակով՝ շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր կամ սպիրտ պարունակող կամ չպարունակող այլ տեղում չհիշատակված կամ չներառված	պահածո
2009	մրգահյութեր և բանջարեղենի հյութեր՝ չխմորված և սպիրտ չավելացված	հյութ
2101	սուրճի, թեյի կամ մատեի (պարագվայական թեյի) լուծամզուքներ, բնահյութեր և խտածոներ (կոնցենտրատներ) և պատրաստի մթերք՝ դրանց կամ սուրճի հիմքով, թեյի կամ մատեի (պարագվայական թեյի) հիմքով, բոված եղերդ և սուրճի այլ բոված փոխարինիչներ և դրանց լուծամզուքները, բնահյութերը և խտածոները	սուրճի և թեյի լուծամզուք
2105 00	պղպղակ և սննդային սառույցի այլ տեսակներ՝ կակաո պարունակող կամ չպարունակող	պղպղակ
2201	ջրեր, ներառյալ՝ բնական կամ արհեստական հանքային ջրերը՝ գազավորված կամ չգազավորված, առանց շաքարի կամ այլ քաղցրացնող կամ բուրավետ նյութերի հավելման	ջուր
2202	ջրեր, ներառյալ՝ հանքային և գազավորված ջրերը՝ շաքարի կամ այլ քաղցրացնող կամ բուրավետ նյութերի հավելմամբ և այլ ոչ ալկոհոլային խմիչքներ	ըմպելիք
2203	գարեջուր	գարեջուր
2208	ԱՏԳ ԱԱ 2208 ապրանքային դիրքին դասվող՝ մինչև 9% սպիրտայնության խմիչքներ, ներառյալ՝ ալկոհոլային կոկտեյլներ	կոկտեյլ
2209 00	քացախ և դրա փոխարինիչներ՝ ստացված քացախաթթվից	քացախ
2309	կենդանիների կերակրելու համար օգտագործվող մթերք	մթերք
2501 00 91	աղ՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի	աղ
2710 19 710 0	քսայուղեր, այլ յուղեր	նավթավերամշակման արտադրանք
2710 19 750 0		
2710 19 820 0		
2710 19 840 0		

2710 19 860 0		
2710 19 880 0		
2710 19 920 0		
2710 19 940 0		
2710 19 980 0		
2936	պրովիտամիններ, վիտամիններ	վիտամին
3002 20 000	պատվաստանյութ՝ մարդու համար, մանրածախ առևտրի համար	պատվաստանյութ
3002 30 000	պատվաստանյութ՝ կենդանիների համար	պատվաստանյութ
3003	դեղամիջոց՝ թերապևտիկ և պրոֆիլակտիկ նպատակներով օգտագործման համար, մանրածախ առևտրի համար չփաթեթավորված	դեղ
3004	դեղամիջոց՝ թերապևտիկ և պրոֆիլակտիկ նպատակներով օգտագործման համար՝ փաթեթավորված մանրածախ առևտրի համար, բացառությամբ պետության կողմից կենտրոնացված կարգով ձեռք բերվող և երաշխավորված կարգով տրամադրվող ինսուլինի կամ թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ պարունակող դեղերի, որոնց համար դրոշմապիտակով դրոշմավորում չի պահանջվում	դեղ
3203 00	բուսական կամ կենդանական ծագում ունեցող ներկող նյութեր (ներառյալ՝ ներկող լուծամզուքները, բացի կենդանական ածուխից)՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության, տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված բուսական կամ կենդանական ծագում ունեցող ներկող նյութերի հիմքով պատրաստված պատրաստուկներ	ներկանյութեր
3204	օրգանական սինթետիկ ներկող նյութեր՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության, պատրաստուկներ՝ պատրաստված տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված օրգանական սինթետիկ ներկող նյութերի հիմքով, օրգանական սինթետիկ արտադրանք, որն օգտագործվում է որպես օպտիկական սպիտակեցնող նյութ կամ լյումինաֆոր՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության	ներկանյութեր
3205 00 000 0	գունավոր լաքեր, տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված գունավոր լաքերի հիմքով պատրաստուկներ	լաքեր
3206	ներկող այլ նյութեր, տվյալ խմբի 3-րդ ծանոթագրության մեջ նշված և 3203, 3204 կամ 3205 ապրանքային դիրքերում ընդգրկված պատրաստուկներից տարբեր պատրաստուկներ, որպես լյումինաֆոր օգտագործվող անօրգանական արտադրանք՝ որոշակի կամ անորոշ քիմիական բաղադրության	ներկանյութեր
3207 10 000 0	պատրաստի գունանյութեր, ապակու պատրաստի պղտորիչներ և պատրաստի ներկեր և համանման պատրաստուկներ	ներկանյութեր
3208	ներկեր և լաքեր (ներառյալ՝ արծնները և ոդորկալաքերը)՝ սինթետիկ պոլիմերների կամ քիմիապես վերափոխված բնական պոլիմերների հիմքով՝ ոչ ջրային միջավայրում դիսպերսված կամ լուծված, տվյալ խմբի 4-րդ ծանոթագրության մեջ նշված լուծույթներ	ներկանյութեր

3209	ներկեր և լաքեր (ներառյալ՝ արծնները և ողորկալաքերը)՝ սինթետիկ պոլիմերների կամ քիմիապես վերափոխված բնական պոլիմերների հիմքով՝ ջրային միջավայրում դիսպերսված կամ լուծված	ներկանյութեր
3210 00	այլ ներկեր և լաքեր (ներառյալ՝ արծնները, ողորկալաքերը և սունձային ներկերը), պատրաստի ջրային գունանյութեր՝ կաշվի մշակման համար օգտագործվող	ներկանյութեր
3211 00	պատրաստի չորարարներ	չորարարներ
3212	գունանյութեր (ներառյալ՝ մետաղական փոշիներ և փաթիլներ)՝ ոչ ջրային միջավայրում դիսպերսված, հեղուկ կամ մածուկանման, որոնք օգտագործվում են ներկերի արտադրության մեջ (ներառյալ՝ արծնները), փայլաթիթեղ դրոշմատպման համար, ներկանյութեր և ներկող այլ նյութեր՝ բաժնեձրարված կամ փաթեթավորմամբ՝ մանրածախ վաճառքի համար	գունանյութեր
3303 00	օժանելիք, հարդաչուր	օժանելիք
3304	կոսմետիկ միջոցներ կամ դիմահարդարման և մաշկի խնամքի այլ միջոցներ (բացառությամբ դեղամիջոցների), ներառյալ՝ արևայրուքի դեմ կամ արևայրուքի համար միջոցներ, ձեռքերի կամ ոտքերի մատնահարդարման միջոցներ	կոսմետիկա
3305	մազերի խնամքի միջոցներ	կոսմետիկա
3306	բերանի խոռոչի և ստամոքսի հիգիենայի միջոցներ, ներառյալ՝ ատամնապրոթեզների ֆիքսման փոշիներն ու մածուկները, միջատամային տարածքները մաքրելու թելեր (ատամները մաքրելու մետաքսաթել)՝ անհատական փաթեթավորմամբ՝ մանրածախ վաճառքի համար	հիգիենայի միջոցներ
3307	միջոցներ՝ սափրվելուց առաջ, սափրվելու ընթացքում կամ դրանից հետո օգտագործելու համար, անհատական օգտագործման հոտազերծիչներ, բաղադրություններ լոգանք ընդունելու համար, մազահեռացման միջոցներ և օժանելիքային, կոսմետիկական ու հարդարման այլ միջոցներ՝ այլ տեղում չնշված կամ չներառված. հոտազերծիչներ՝ նախատեսված շենքերում օգտագործելու համար՝ բուրավետացված կամ ոչ բուրավետացված, ախտահանիչ հատկություններով օժտված կամ առանց դրանց	խնամքի միջոցներ
3401	օճառ, մակերևութային ակտիվ օրգանական նյութեր և միջոցներ, որպես օճառ կիրառվող (կտորների, քառակողիկների կամ կաղապարվածքների ձևով)՝ օճառ պարունակող կամ չպարունակող, մակերևութային ակտիվ օրգանական նյութեր և մաշկը լվանալու համար միջոցներ՝ հեղուկների կամ քսուքների տեսքով՝ կշռաբաշխված մանրածախ առևտրի համար՝ օճառ պարունակող կամ չպարունակող, թուղթ, բամբակ, թաղիք կամ նրբաթաղիք (ֆետր) և չհյուսված նյութեր՝ ներծծված կամ պատված օճառով կամ լվացող միջոցով	օճառ
3402	մակերևութային ակտիվ օրգանական նյութեր (բացի օճառից), մակերևութային ակտիվ նյութեր, լվացող միջոցներ (ներառյալ՝ օճառակ լվացող միջոցները) և	օճառ

	մաքրող միջոցներ՝ օճառ պարունակող կամ չպարունակող (բացի 3401 ապրանքային դիրքի միջոցներից)	
3403 19 100 0	քսայուղեր, այլ յուղեր	նավթավերամշակման արտադրանք»:
3403 19 900 0		
3403 99 000 0		

Հոդված 3. Օրենքի 18-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 18. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու համար

1. Սույն օրենքի պահանջները խախտելու համար առևտրի և ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձինք (անհատ ձեռնարկատերերը) կրում են պատասխանատվություն՝ Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Սույն օրենքով սահմանված դրույթները խախտելու համար կիրառվում են սույն հոդվածով և Արցախի Հանրապետության օրենքներով սահմանված պատասխանատվության միջոցները:

3. Դրոշմապիտակների մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձևով կամ դրոշմավորման ենթակա ապրանքները ոչ այդ արտադրատեսակի դրոշմավորման համար տրամադրված դրոշմապիտակներով դրոշմավորված, ինչպես նաև որոշակի տարողության համար տրամադրված դրոշմապիտակներով այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) տարայավորված՝ դրոշմավորված ապրանքներ օտարելու դեպքում, եթե օտարման համար նախատեսված վայրում գտնվող այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ նշված չլինելու դեպքում՝ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով՝

1) չի գերազանցում 50000 ՀՀ դրամը, ապա դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն կրող անձը վճարում է տուգանք՝ հինգ հարյուր հազար ՀՀ դրամի չափով.

2) գերազանցում է 50000 ՀՀ դրամը, ապա դրոշմապիտակներով դրոշմավորման պարտավորություն կրող անձը վճարում է տուգանք՝ ապրանքների ընդհանուր արժեքի 100 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան մեկ միլիոն ՀՀ դրամը:

Սույն մասով սահմանված տուգանքները ենթակա են վճարման պետական բյուջե՝ խախտումն արձանագրելուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

Սույն մասով սահմանված տուգանքների գումարների տասը տոկոսի չափով մասհանումները գանձվում են «Հարկային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված հարկային մարմնի համակարգի զարգացման ֆոնդ:

Սույն մասով սահմանված խախտումներն արձանագրվում են «Արցախի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման

մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

Հոդված 4. Օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում «2018» թիվը փոխարինել «2021» թվով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2018 թվականի մարտի 1-ից:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-73-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի հոկտեմբերի 29-ի ընտրական օրենսգրքի 146-րդ հոդվածում՝

- 1) վերնագրի «դրույթ» բառը փոխարինել «դրույթներ» բառով.
- 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մաս.

«2. Սահմանել, որ մինչև Արցախի Հանրապետության Սահմանադրության 173-րդ հոդվածով նախատեսված օրենսդրական կարգավորումներն ուժի մեջ մտնելը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2006 թվականի Սահմանադրությամբ սահմանված ժամկետով ընտրված համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի պաշտոնավարման ժամկետը լրանալու կամ նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում այդ պաշտոններում նշանակվում են պաշտոնակատարներ՝ գյուղական համայնքներում՝ համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարի որոշմամբ, Ստեփանակերտի քաղաքային համայնքում՝ տարածքային կառավարման բնագավառի պետական մարմնի ներկայացմամբ, իսկ այլ քաղաքային համայնքներում՝ համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարի ներկայացմամբ՝ կառավարության որոշմամբ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2016 թվականի ապրիլի 14-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-74-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-70-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմերի» բառերով.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Արցախի Հանրապետության Նախագահի, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի, Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմերում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանում է համապատասխանաբար՝ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը, Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ-աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալը (Կառավարության գործերի կառավարչությունում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց մասով), Արցախի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, Արցախի Հանրապետության պետական նախարարը:».

3) 4-րդ մասի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պետական նախարարի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» պարբերությունից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների հետ առնչվելու համար,» բառերը:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածի 2.1-ին մասից հանել «՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության առաջարկությամբ» բառերը:

Հոդված 5. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «կամ առավել մոտ «(0.1 միավոր տարբերությամբ)» բառերը փոխարինել «(0.01 միավոր տարբերությամբ)» բառերով.

2) 3-րդ մասի «հավասար» բառից հետո լրացնել «(0.01 միավոր տարբերությամբ)» բառերը:

Հոդված 6. Օրենքի N 1 և N 2 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Հոդված 7. Օրենքի N 3 հավելվածի «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերով:

Հոդված 8. Օրենքի N 4 հավելվածի «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերով:

Հոդված 9. Օրենքի N 5 հավելվածի «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերով:

Հոդված 10. Օրենքի ամբողջ տեքստում, բացառությամբ ««Հանրային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով» բառերի և դրանց հոլովածների ու 31-րդ հոդվածի 3-րդ մասի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 27
Ստեփանակերտ
ՀՕ-75-Ն

Հավելված
 «Պետական պաշտոններ զբաղեցնող
 անձանց վարձատրության մասին» Լեռնային
 Ղարաբաղի Հանրապետության օրենքում
 փոփոխություններ և լրացում» կատարելու մասին»
 Արցախի Հանրապետության օրենքի

«Հավելված N 1
 «Պետական պաշտոններ զբաղեցնող
 անձանց վարձատրության մասին» Լեռնային
 Ղարաբաղի Հանրապետության օրենքի

**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆՍԱՐ ԱՆՁ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ
 ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ
 ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՑՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ
 ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ**

Պաշտոնի անվանումը	Գործակից
ԱՀ Նախագահ	16.00
ԱՀ Ազգային ժողովի նախագահ	14.40
ԱՀ պետական նախարար	14.40
ԱՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար	12.00
ԱՀ Անվտանգության խորհրդի քարտուղար	12.00
ԱՀ մարդու իրավունքների պաշտպան	12.00
ԱՀ Գերագույն դատարանի նախագահ	12.00
ԱՀ Հաշվեքննիչ պալատի նախագահ	12.00
ԱՀ գլխավոր դատախազ	12.00
ԱՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալ	11.20
ԱՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահ	9.60
ԱՀ նախարար	9.60
ԱՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն	9.60
ԱՀ ոստիկանության պետ	9.60
ԱՀ Գերագույն դատարանի դատավոր	9.20
ԱՀ վերաքննիչ դատարանի նախագահ	9.20
ԱՀ վերաքննիչ դատարանի դատավոր	8.80
ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահ	8.80
ԱՀ գլխավոր դատախազի տեղակալ	8.80
ԱՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ	8.40
ԱՀ Ազգային ժողովի պատգամավոր	8.00
ԱՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար	8.00
ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր	8.00
ԱՀ Հաշվեքննիչ պալատի անդամ	8.00
ԱՀ նախարարի առաջին տեղակալ	8.00
ԱՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ	8.00
ԱՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ	8.00
Օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմնի (հանձնաժողովներ, ծառայություններ, խորհուրդներ և այլն) ղեկավար	8.00
ԱՀ պետական կառավարման այլ մարմնի ղեկավար	8.00

Պաշտոնի անվանումը	Գործակից
Ստեփանակերտի քաղաքապետ	8.00
ԱՀ շրջանի վարչակազմի ղեկավար	8.00
ԱՀ ԱՆ դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարող	8.00
Ստեփանակերտ քաղաքի դատախազ	7.50
Շրջանի դատախազ, կայագործների զինվորական դատախազ	7.20
ԱՀ նախարարի տեղակալ	6.80
ԱՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ	6.80
ԱՀ ոստիկանության պետի տեղակալ	6.80
ԱՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ղեկավար	6.40
Օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմնի (խորհուրդներ, հանձնաժողովներ, ծառայություններ և այլն) ղեկավարի տեղակալ	6.40
ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար	6.40
Ստեփանակերտի քաղաքապետի տեղակալ	6.40
ԱՀ շրջանի վարչակազմի ղեկավարի տեղակալ	6.40
Օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմնի (հանձնաժողովներ, ծառայություններ, խորհուրդներ և այլն) անդամ (բացառությամբ ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի)	6.00
ԱՀ պետական կառավարման այլ մարմնի ղեկավարի տեղակալ	6.00
ԱՀ ԱՆ դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողի տեղակալ	6.00
ԱՀ Նախագահի աշխատակազմ	
ԱՀ Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ-աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ	9.60
ԱՀ Նախագահի խորհրդական-վարչության պետ	8.00
ԱՀ Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավար	8.00
ԱՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ-վարչության պետ	8.00
ԱՀ Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետի տեղակալ	6.80
ԱՀ Նախագահի խորհրդական	6.45
ԱՀ Նախագահի ներկայացուցիչ՝ հատուկ հանձնարարությունների գծով	6.45
Հատուկ հանձնարարություններով դեսպան	6.45
ԱՀ Անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալ	6.45
ԱՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ	6.45
ԱՀ Նախագահի առաջին օգնական	5.50
ԱՀ Նախագահի օգնական	4.95
ՀՀ-ում ԱՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ	4.40
ԱՀ Ազգային ժողովի աշխատակազմ	
ԱՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի տեղակալ	6.07
ԱՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդական	5.23
ԱՀ Ազգային ժողովի նախագահի օգնական	4.40

**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆՍԱՐ ԱՆՁ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ
ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ, ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԳՈՐԾԱՐԴԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՑՔԱՉԱՓԵՐԻ
ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱԿԵՑՆԵՐԸ**

Պաշտոնի անվանումը	Գործա- կից
ԱՀ Նախագահի աշխատակազմ	
ԱՀ Նախագահի մամուլի քարտուղար	4.95
ԱՀ Նախագահի ռեֆերենտ	3.30
ԱՀ Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետի օգնական	2.50
ԱՀ Ազգային ժողովի աշխատակազմ	
ԱՀ Ազգային ժողովի նախագահի մամուլի քարտուղար	4.40
ԱՀ Ազգային ժողովի նախագահի ռեֆերենտ	3.30
ԱՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի օգնական	2.50
ԱՀ Ազգային ժողովի նախագահի տեղակալի ռեֆերենտ	2.20
ԱՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնական	2.20
ԱՀ պետական նախարարի աշխատակազմ	
ԱՀ պետական նախարարի խորհրդական	5.23
ԱՀ պետական նախարարի օգնական	4.40
ԱՀ դատախազություն	
Գլխավոր դատախազության բաժնի պետ, հատուկ քննչական բաժնի պետ, զինվորական դատախազի տեղակալ	7.50
Գլխավոր դատախազության ավագ դատախազ, հատուկ քննչական բաժնի հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ, Ստեփանակերտ քաղաքի դատախազի տեղակալ	7.00
Գլխավոր դատախազության բաժնի ավագ դատախազ, զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ, շրջանի դատախազի տեղակալ, կայազորի զինվորական դատախազի տեղակալ	6.50
Գլխավոր դատախազության դատախազ, գլխավոր դատախազության բաժնի դատախազ, հատուկ քննչական բաժնի հատկապես կարևոր գործերի քննիչ, զինվորական կենտրոնական դատախազության դատախազ	6.00
Ստեփանակերտ քաղաքի դատախազության ավագ դատախազ	5.50
Շրջանի դատախազության ավագ դատախազ, Ստեփանակերտ քաղաքի դատախազ, կայազորի զինվորական դատախազության ավագ դատախազ	5.00
Շրջանի դատախազության դատախազ, կայազորի զինվորական դատախազության դատախազ	4.00
ԱՀ գլխավոր դատախազի խորհրդական	3.00
ԱՀ գլխավոր դատախազի մամուլի քարտուղար	2.50
Նախարարություններ	
Նախարարի խորհրդական	3.00
Նախարարի օգնական	2.50

Նախարարի մամուլի քարտուղար	2.50
Օրենքով ստեղծված մշտապես գործող մարմիններ (հանձնաժողովներ, ծառայություններ, խորհուրդներ և այլն)	
Օրենքով ստեղծված մշտապես գործող մարմնի (հանձնաժողովների, ծառայությունների, խորհուրդների և այլն) ղեկավարի խորհրդական	2.50
Օրենքով ստեղծված մշտապես գործող մարմնի (հանձնաժողովների, ծառայությունների, խորհուրդների և այլն) ղեկավարի օգնական	2.00
Օրենքով ստեղծված մշտապես գործող մարմնի (հանձնաժողովների, ծառայությունների, խորհուրդների և այլն) ղեկավարի մամուլի քարտուղար	2.00
ԱՀ պետական կառավարման այլ մարմիններ	
ԱՀ պետական կառավարման այլ մարմնի ղեկավարի խորհրդական	2.50
ԱՀ պետական կառավարման այլ մարմնի ղեկավարի օգնական	2.00
ԱՀ պետական կառավարման այլ մարմնի ղեկավարի մամուլի քարտուղար	2.00
Ստեփանակերտի քաղաքապետարան և շրջանների վարչակազմեր	
Ստեփանակերտի քաղաքապետի և շրջանի վարչակազմի ղեկավարի օգնական	2.00
Ստեփանակերտի քաղաքապետի և շրջանի վարչակազմի ղեկավարի մամուլի քարտուղար	2.00
Նախարարության կառավարման ոլորտում գործող պետական կառավարման մարմիններ	
Նախարարության կառավարման ոլորտում գործող պետական կառավարման մարմնի ղեկավար	6.80
Նախարարության կառավարման ոլորտում գործող պետական կառավարման մարմնի ղեկավարի տեղակալ	4.80
Հանրապետական գործադիր մարմինների կազմում գործող ծրագրեր իրականացնող պետական հիմնարկներ	
Տնօրեն	6.00
Տնօրենի տեղակալ	4.95
Բաժնի պետ	4.48
Գլխավոր մասնագետ	3.36
Առաջատար մասնագետ	3.03
Առաջին կարգի մասնագետ	2.50

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 18-ի ՀՕ-43 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

1) 1-ին կետի «գ» ենթակետում վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ» ենթակետ.

«դ. իրավաբանական անձի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում ֆիզիկական անձի կողմից շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)) ներդրումը, եթե այդ ներդրմանը համապատասխանող՝ ֆիզիկական անձին պատկանող բաժնեմասը մինչև ներդրումը կատարելու պահին հաջորդող երեք տարին լրանալը օտարվել է այլ անձի:».

2) 2-րդ կետը «վարձակալությունը» բառից հետո լրացնել «(բացառությամբ ապրանքի ֆինանսական վարձակալության (լիզինգի) այն դեպքերի, երբ վարձակալության պայմանագրով նախատեսվում է ապրանքի սեփականության իրավունքի փոխանցում վարձակալին)» բառերով:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում անձին պատկանող բաժնեմասի կամ փայի նկատմամբ սեփականության իրավունքի՝ այլ անձի օտարումը, ինչպես նաև ապապետականացման գործարքները.».

2) 9.1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.2-րդ կետ.

«9.2) պետության կամ համայնքի կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում գույքի ներդրումը:»:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Տարայավորված ապրանքի մատակարարման դեպքում տարայի արժեքը ներառվում է ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մեջ՝ անկախ ապրանքի մատակարարման պայմանագրով տարայի վերադարձ նախատեսված լինելու հանգամանքից.».

2) 4-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Սույն կետով սահմանված դեպքում պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող Արցախի Հանրապետության անձն ազատվում է ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունից, եթե

ապրանքի ներմուծման փաստաթղթերով (այդ թվում՝ ներմուծման հարկային հայտարարագրով կամ ներմուծման մաքսային հայտարարագրով) հիմնավորվում է, որ ներմուծումը կատարվել է Արցախի Հանրապետության անձի անունով՝ անկախ ապրանքի նկատմամբ սեփականության իրավունքն Արցախի Հանրապետության տարածքում փոխանցվելու հանգամանքից».

3) 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) եթե Արցախի Հանրապետության կառավարության սահմանած ապրանքատեսակների մատակարարման գործարքների մասով մատակարարված ապրանքի դիմաց հատուցման ենթակա գումարը կնքված պայմանագրի համաձայն ենթակա է ճշտման՝ ճշգրտվող տվյալների (ապրանքի վերջնական քանակի, որակական հատկանիշների) հիման վրա, ապրանքն ստանալուց կամ դրա վերամշակումն ավարտելուց հետո, ապա մատակարարված ապրանքների մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է օտարերկրյա բորսայի կամ հանդեսի կողմից հրապարակվող տվյալներով որոշվող՝ ապրանքի միավորի հաշվարկային գնի և տվյալ ապրանքի մատակարարման պայմանագրով նախատեսվող ճշգրտվող տվյալների (մասնավորապես՝ ապրանքի վերջնական քանակի, որակական հատկանիշների) հիման վրա (անկախ վերջնահաշվարկի արդյունքում վճարման ենթակա հատուցման գումարից):

Սույն կետի կիրառման առումով՝

ա. հարկվող շրջանառության որոշման նպատակով ճշգրտվող տվյալները, դրանց ճշգրտման առավելագույն սահմանները, ինչպես նաև ապրանքի միավորի հաշվարկային գնի որոշման կարգը (ներառյալ՝ հաշվարկային գնի որոշման պարբերականությունը) սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը.

բ. ապրանքի մատակարարման գործարքների դեպքում ապրանքի մատակարարման դիմաց հատուցման ենթակա գումարի (առանց ԱԱՀ-ի) ավելացումը կամ պակասեցումը ներառվում է ապրանքի մատակարարման դիմաց հատուցման ենթակա վերջնական գումարը հայտնի դառնալու օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկում՝ որպես ԱԱՀ-ով հարկվող շրջանառության ավելացում կամ պակասեցում».

4) 10-րդ կետի՝

ա. առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Չենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է սույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան դրանց համար գույքահարկով և հողի հարկով հարկման բազայի (հարկվող օբյեկտի) չափով, բացառությամբ սույն կետով սահմանված դեպքի: Սույն պարբերության դրույթները չեն կիրառվում, եթե սույն պարբերությամբ սահմանված գույքային միավորների օտարման գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով):».

բ. երրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

5) 10-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1-ին կետ.

«10.1) Չենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի վարձակալության կամ

անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է սույն հոդվածով սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան դրանց համար գույքահարկով և հողի հարկով հարկման բազայի (հարկվող օբյեկտի), իսկ դրա բացակայության դեպքում՝ գույքահարկով և հողի հարկով հարկման տվյալ օբյեկտի ընդհանուր մակերեսում վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնված տարածքի մակերեսի տեսակարար կշռին համապատասխանող հարկման բազայի (հարկվող օբյեկտի) հինգ տոկոսի չափով՝ հաշվարկված տարեկան կտրվածքով: Այդ մեծությունը, ըստ ԱԱՀ-ի ամբողջական հաշվետու ժամանակաշրջանների, բաշխվում է հավասարաչափ:

ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում սույն կետով սահմանված գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու և (կամ) այդ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը դադարեցվելու դեպքում այդ հաշվետու ժամանակաշրջանում նշված գործարքների մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է որպես սույն կետի առաջին պարբերությամբ որոշված հարկվող շրջանառության և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվելու օրերի՝ ԱԱՀ-ի հաշվետու ժամանակաշրջանում ներառվող օրերի մեջ ունեցած տեսակարար կշռի արտադրյալ:

Սույն կետի դրույթները չեն կիրառվում, եթե սույն կետով սահմանված գույքային միավորների վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու գործարքի կողմ է համարվում պետությունը կամ համայնքը (բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը կատարվում է այլ կազմակերպության միջոցով)»:

6) 11-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ կետ.

«12) եթե ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով նախատեսվում է, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին, ապա ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է սույն հոդվածով սահմանված կարգով, իսկ եթե ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով չի նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին, ապա ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում ֆինանսական վարձակալությունից ստացման ենթակա տոկոսագումարը»:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածի՝

1) երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատուցման գումարի մեջ (ներառյալ 20 տոկոս դրույքաչափը) ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16,67 տոկոս հաշվարկային դրույքաչափով, եթե՝

1) ԱԱՀ վճարողը սույն օրենքի պահանջների խախտմամբ, իրեն չի համարել ԱԱՀ վճարող.

2) ԱԱՀ վճարող համարվող անձը ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հարկման ենթակա՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ համարվող գործարքների գծով

դուրս գրված հաշվարկային փաստաթղթում առանձին տողով չի նշել ԱԱՀ-ի դրույքաչափն ու գումարը.

3) ԱԱՀ վճարող համարվող անձը ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հարկման ենթակա՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ համարվող գործարքների գծով հաշվարկային փաստաթուղթ դուրս չի գրել:».

2) երրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 15-րդ հոդվածի՝

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) հանրակրթական ուսումնական հաստատությունների, մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական, արվեստի և գեղարվեստի ուսումնական հաստատությունների, մարզադպրոցների, արհեստագործական ուսումնարանների, որակավորման և վերաորակավորման, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսուցման ծառայությունների մատուցումը: Սույն կետում նշված հասկացությունները կիրառվում են «Կրթության մասին», «Հանրակրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներում նույն հասկացությունների կիրառության իմաստով ու նշանակությամբ.».

2) 6-րդ կետում «թունաքիմիկատների,» բառից հետո լրացնել «0106 41 000, 0106 90 009 0, 5305 00 000 0, 9406 00 310 0 ծածկագրերին դասվող ապրանքների, ինչպես նաև» բառերը.

3) 17-րդ կետի՝

ա. վեցերորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«- բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից արտարժույթի (թղթադրամի և մետաղադրամի, բացառությամբ դրամագիտական նշանակություն ունեցող և այդ նպատակով օգտագործվող մետաղադրամների և բանկային տոմսերի) օտարումը և (կամ) փոխանակումը հայկական դրամի հետ, բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ հարկ վճարողների կողմից կնքվող ածանցյալ ֆինանսական գործիքների օտարումը, փոխանցումը, փոխանակումը կամ այլ կերպ օտարումը և այդ գործարքներով նախատեսված բոլոր վճարումների կատարումը, բացառությամբ այն վճարումների, որոնք իրականացվում են այնպիսի գույքի փաստացի մատակարարման դիմաց, որի օտարումը սույն օրենքի համաձայն ենթակա է ԱԱՀ-ով հարկման.».

բ. ութերորդ և տասներկուերորդ պարբերություններն ուժը կորցրած ճանաչել,

գ. տասնչորսերորդ պարբերությունում ստորակետը փոխարինել վերջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Սույն պարբերության կիրառության իմաստով՝ գրավի առարկան մինչև բանկի կամ վարկային կազմակերպության սեփականությունը դառնալը համարվում է անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձանց պատկանող, եթե գրավի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքի վկայականում նշված չէ, որ այն պատկանում է տվյալ անհատ ձեռնարկատիրոջը.».

դ. տասնյոթերորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«- բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական վարձակալության (լիզինգի) ծառայության մատուցումը, եթե ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով չի նախատեսվում, որ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել վարձակալին:».

4) 30-րդ և 33-րդ կետերում «2018 թվականի» բառերը փոխարինել «2021 թվականի» բառերով.

5) 32-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

6) 34-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«34) մինչև 2021 թվականի հունվարի 1-ը գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակության ընթացքում կատարվող մեքենայացված աշխատանքները՝ համաձայն Արցախի Հանրապետության կառավարության սահմանած ցանկի.».

7) 36-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 37-րդ և 38-րդ կետեր.

«37) տարա արտադրող չհանդիսացող և տարա ներմուծող չհանդիսացող հարկ վճարողների կողմից տարայի օտարումը.

38) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետում չնշված գույքի ներդրումը: Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետում նշված գույքի ներդրումն ազատվում է ԱԱՀ-ից, եթե այդ ներդրմանը համապատասխանող՝ ֆիզիկական անձին պատկանող բաժնեմասը մինչև ներդրումը կատարելու պահին հաջորդող երեք տարին լրանալը չի օտարվել այլ անձի:»:

Հոդված 6. Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ կետում՝

1) երկրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«ԱԱՀ վճարողների կողմից գույքի լուծարման դեպքում, որի մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում սահմանված կարգով կատարվել է ԱԱՀ-ի գումարների հաշվանցում (պակասեցում), հաշվանցված (պակասեցված) ԱԱՀ-ի գումարները ենթակա են վերաձևակերպման՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներից նվազեցման՝ տվյալ գույքի հաշվեկշռային արժեքի նկատմամբ ԱԱՀ-ի 20 տոկոս դրույքաչափով հաշվարկված գումարի չափով: Սույն պարբերությունում նշված գույքը հետագայում որպես նույն նպատակային նշանակության գույք օտարելու դեպքում սույն պարբերությամբ սահմանված կարգով հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներից նվազեցված ԱԱՀ-ի գումարները կրկին ենթակա են վերաձևակերպման՝ օտարման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանում հաշվանցման (պակասեցման) ենթակա գումարներին ավելացման, եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ գույքի օտարումն ԱԱՀ-ով հարկվող գործարք է:»:

Հոդված 7. Օրենքի 31-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Իրավաբանական անձի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից մինչև ներդրումը կատարելու պահին հաջորդող երեք տարին լրանալն այդ ներդրմանը համապատասխանող՝ ֆիզիկական անձին պատկանող բաժնեմասն օտարվելու դեպքում սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետում նշված գույքի ներդրման գործարքի մասով հարկային պարտավորության (ԱԱՀ-ի հաշվարկման) ծագման պահ է համարվում բաժնեմասի օտարման պահը:»:

Հոդված 8. Օրենքի 45-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 45. Սույն օրենքի կիրառման վերաբերյալ գերատեսչական նորմատիվ ակտերն ընդունում է Արցախի Հանրապետության հարկային մարմինը՝

1) սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-4-րդ կետերի դրույթների վերաբերյալ՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ.

2) սույն օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերի դրույթների վերաբերյալ՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հետ.

3) սույն օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ կետի դրույթների վերաբերյալ՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության հետ.

4) սույն օրենքի 15-րդ հոդվածի 19-րդ կետի դրույթների վերաբերյալ՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության հետ:»:

Հոդված 9. Օրենքի տեքստում, բացառությամբ ««Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Առևտրի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» և ««Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 10. ««Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-88 օրենքի 3-րդ հոդվածում «2018 թվականի» բառերը փոխարինել «2021 թվականի» բառերով:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 28
Ստեփանակերտ
ՀՕ-76-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆՏԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՑԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՁՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքի նպատակը Արցախի Հանրապետության պաշտպանության, մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ (այսուհետ՝ մարտական գործողություններ) զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովող հատուկ համակարգի ներդրումն է:

Գ Լ ՈՒ Խ 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով կարգավորվում են մարտական գործողությունների հետևանքով զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում են դրոշմանիշային վճար վճարողների շրջանակը, վճարների չափը, հաշվարկման և վճարման կարգն ու ժամկետները:

Հոդված 2. Շահառուները, հատուցման դեպքերը, հատուցման վճարման հիմքերը և շրջանակները

1. Սույն օրենքի համաձայն՝ շահառուներ են համարվում այն զինծառայողները, որոնց կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել մարտական գործողությունների հետևանքով: Սույն հոդվածի իմաստով՝

1) զինծառայողի կյանքին պատճառված վնաս է համարվում զինծառայողի զոհվելը (մահանալը) կամ անհայտ կորչելը:

2) զինծառայողի առողջությանը պատճառված վնաս է համարվում ստացած վնասվածքի կամ խեղման հետևանքով զինծառայողի աշխատունակության կորուստը:

2. Զինծառայող են համարվում՝

1) Արցախի Հանրապետության զինված ուժերում և (կամ) այլ զորքերում ժամկետային պարտադիր կամ պայմանագրային զինվորական ծառայություն անցնող կամ օրենքով սահմանված կարգով պահեստագորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված ու մարտական գործողություններին մասնակցող կամ մասնակցած անձը:

2) տարածքային պաշտպանությանը ներգրավված և մարտական գործողություններին մասնակցած կամ զինվորական ծառայության մեջ

չգտնվող ու մարտական գործողություններին մասնակցելու նպատակով կամավորագրված և մարտական գործողություններին մասնակցող կամ մասնակցած անձը (այսուհետ՝ կամավորագրված անձ):

3. Զինձառայողի զոհվելու (մահանալու) կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում շահառու են համարվում զինձառայողի՝

- 1) ամուսինը.
- 2) զավակը (զավակները).
- 3) ծնողը (ծնողները).

4) հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ 18 տարին չըրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան առկա ցերեկային ուսուցմամբ սովորող ուսանող քույրը և եղբայրը, ինչպես նաև զինձառայողի խնամքի տակ գտնված 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև 18 տարին լրանալը: Ընդ որում, քույրը և եղբայրը համարվում են շահառու, եթե նրանց ծնողները կամ միակ ծնողը մահացած են կամ ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության երրորդ աստիճանի սահմանափակում:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված շահառուների բացակայության դեպքում շահառու է համարվում նաև այլ անձը, եթե դատական կարգով հաստատվել է, որ՝

1) հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ անձը եղել է զինձառայողի խնամքի տակ և ունեցել է հաշմանդամություն կամ աշխատանքային կենսաթոշակի իրավունք.

2) խնամել է զինձառայողին մինչև նրա 18 տարին լրանալը:

5. Հատուցման դեպք (այսուհետ՝ Հատուցման դեպք) է համարվում 2016 թվականի դեկտեմբերի 31-ից հետո տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում զինձառայողի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելը: Հատուցման դեպքը համարվում է տեղի ունեցած, եթե՝

1) զինձառայողը զոհվել (մահացել) է մարտական գործողությունների ժամանակ կամ մարտական գործողությունների ավարտի օրվանից հետո՝ հինգ տարվա ընթացքում, մարտական գործողությունների հետևանքով ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով.

2) զինձառայողը մարտական գործողությունների ժամանակ անհայտ կորչելու հետևանքով օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող, և դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից անցել է վեց ամիս, եթե մինչև հատուցման գումար վճարելու սկիզբը զինձառայողը չի հայտնաբերվել, կամ

3) զինձառայողը մարտական գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման հետևանքով ստացել է 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն:

6. Սույն օրենքի համաձայն՝ Հատուցման դեպք չի համարվում այն դեպքը, երբ զինձառայողի զոհվելը (մահանալը) կամ հաշմանդամ դառնալը իր կողմից կատարված կանխամտածված օրինազանցության հետևանք է:

Հողված 3. Հատուցում վճարողը

1. Սույն օրենքով նախատեսված հատուցման գումարները վճարում է Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ):

Գ Լ ՈՒ Խ 2

ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ, ՎՃԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հողված 4. Հատուցման գումարների չափերը և վճարման պայմանները

1. Հատուցման գումարները վճարվում են հետևյալ նվազագույն չափերով.

1) գոհվելու (մահանալու) կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում՝

ա. պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստագորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված սպայական կազմի զինծառայողին՝ 82 000 000 ՀՀ դրամ,

բ. պայմանագրային զինվորական ծառայության կամ պահեստագորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողին կամ տարածքային պաշտպանությանը ներգրավված կամ կամավորագրված անձին՝ 70 000 000 ՀՀ դրամ,

գ. պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողին՝ 58 000 000 ՀՀ դրամ.

2) առողջությանը պատճառված վնասի հետևանքով՝

ա. պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստագորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված սպայական կազմի զինծառայողի 1-ին խմբի հաշմանդամության դեպքում՝ 82 000 000 ՀՀ դրամ,

բ. պայմանագրային զինվորական ծառայության կամ պահեստագորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողի կամ տարածքային պաշտպանությանը ներգրավված կամ կամավորագրված անձի 1-ին խմբի հաշմանդամության դեպքում՝ 70 000 000 ՀՀ դրամ,

գ. պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողի 1-ին խմբի հաշմանդամության դեպքում՝ 58 000 000 ՀՀ դրամ,

դ. պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստագորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված սպայական կազմի զինծառայողի 2-րդ խմբի հաշմանդամության դեպքում՝ 53 000 000 ՀՀ դրամ,

ե. պայմանագրային զինվորական ծառայության կամ պահեստագորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողի կամ տարածքային պաշտպանությանը ներգրավված կամ կամավորագրված անձի 2-րդ խմբի հաշմանդամության դեպքում՝ 41 000 000 ՀՀ դրամ,

գ. պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողի 2-րդ խմբի հաշմանդամության դեպքում՝ 29 000 000 ՀՀ դրամ:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գումարները վճարվում են հետևյալ պայմաններով.

1) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված գումարից 10 000 000 ՀՀ դրամը վճարվում է միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական հավասար վճարներով՝ 20 տարվա ընթացքում.

2) սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ», «ե» և «զ» ենթակետերում նշված գումարից 5 000 000 ՀՀ դրամը վճարվում է միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական հավասար վճարներով՝ 20 տարվա ընթացքում:

3. Եթե Հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ զինծառայողն ունի երեք կամ ավելի՝ 18 տարին չըրացած երեխաներ կամ 23 տարին չըրացած առկա ցերեկային ուսուցմամբ սովորող զավակներ կամ 18 տարեկան կամ դրանից բարձր տարիքի հաշմանդամ զավակներ, եթե նրանք հաշմանդամ են ճանաչվել մինչև 18 տարին լրանալը, ապա սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն վճարվող ամսական հավասար վճարին ավելացվում է ամսական լրացուցիչ 100 000 ՀՀ դրամ: Սույն մասով սահմանված լրացուցիչ գումարի վճարումը դադարեցվում է սույն մասով սահմանված լրացուցիչ գումար ստանալու իրավունք տվող հիմքը վերանալու, ինչպես նաև հատուցման գումարների վճարման ժամկետը լրանալու կամ հատուցման գումարների վճարման հիմքը վերանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Սույն մասի դրույթները կիրառվում են նաև այն դեպքում, երբ սույն մասով սահմանված լրացուցիչ գումար ստանալու իրավունք տվող հիմքը ծագում է Հատուցման դեպքը տեղի ունենալու օրվանից հետո: Սույն մասի կիրառման նպատակով՝

1) Արցախի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն) սահմանում է սույն մասում նշված լրացուցիչ գումար ստանալու իրավունք տվող հիմքերը և դրանց փոփոխման մասին տեղեկությունները բացահայտելու, հավաքելու, մշակելու, սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված համապատասխան պետական մարմիններին և Հիմնադրամին տրամադրելու կարգը, ինչպես նաև սույն մասի 3-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված փաստերի հաստատման նպատակով ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկը և ներկայացման կարգը, ներկայացված փաստաթղթերի հիման վրա որոշում ընդունելու կարգը.

2) Հիմնադրամը սահմանում է սույն մասում նշված լրացուցիչ գումար ստանալու իրավունք տվող հիմքերի վերաբերյալ տեղեկությունների հաշվառման կարգը.

3) եթե զինծառայողի կապակցությամբ տեղի է ունեցել սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում նշված Հատուցման դեպքը, ապա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով այլ բան ապացուցված չլինելու պարագայում համարվում է, որ զինծառայողն ունի 18 տարին չըրացած երեք կամ ավելի երեխա, նաև այն դեպքում, երբ առկա են սույն կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված բոլոր հանգամանքները միաժամանակ, կամ առկա է սույն կետի «դ» ենթակետում նշված հանգամանքը՝

ա. երրորդ երեխան կենդանի ծնվել է Հատուցման դեպքը տեղի ունենալու օրը ներառող ամսվան հաջորդող ինն ամսվա ընթացքում,

բ. բժշկական ախտորոշման տվյալներից հետևում է, որ ծնված երեխան սաղմնավորվել է մինչև Հատուցման դեպքը տեղի ունենալու օրը,

գ. Հատուցման դեպքը տեղի ունենալու օրվան նախորդող՝ ոչ պակաս, քան ինն ամսվա ընթացքում անընդմեջ երեխայի մայրը հանդիսացել է զինծառայողի կինը, և Հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ երեխայի մոր և զինծառայողի միջև ամուսնությունը դադարեցված չի եղել ամուսնալուծության հիմքով, և Հատուցման դեպքը տեղի ունենալու օրվան հաջորդող ինն ամսվա ընթացքում՝ որևէ ժամանակահատվածում, երեխայի մայրը կրկին ամուսնացած չի եղել,

դ. եթե առկա են հատուցման գումար վճարելու՝ սույն օրենքով սահմանված բոլոր այլ հիմքերը, բացկայում են սույն կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում կամ դրանցից մեկում նշված հանգամանքները, սակայն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է, որ ծնված երեխան հանդիսանում է զինծառայողի երեխան:

4. Սույն հոդվածում նշված հատուցման գումարների չափերը Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշմամբ կարող են ինդեքսավորման արդյունքներով ավելացվել՝ կախված Հիմնադրամի ֆինանսական գործունեության արդյունքներից:

5. Կախված Հիմնադրամի ֆինանսական գործունեության արդյունքներից՝ Խորհուրդը կարող է կայացնել որոշում՝

1) հատուցման գումարների վճարումը նաև սույն հոդվածի 2-րդ մասում նշված 20 տարվա ավարտից հետո շարունակելու վերաբերյալ: Սույն կետում նշված դեպքում վճարման ենթակա հատուցման գումարների չափը և վճարման ժամկետները սահմանում է Խորհուրդը.

2) իր սահմանած որոշակի եղանակներով (դրամական միջոցների վճարում, բնամթերային ձևով օգնություն, այլ եղանակ) և ժամկետներում հատուցում վճարել նաև Հատուցման այն դեպքերի համար, որոնք տեղի են ունեցել մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:

6. Եթե հատուցման վճարը նշանակելուց հետո նույն զինծառայողի կապակցությամբ տեղի է ունենում սույն օրենքով սահմանված Հատուցման դեպքի փոփոխություն, ապա շահառուին (շահառուներին) նոր Հատուցման դեպքի հիմքով վճարման ենթակա և նախկինում տեղի ունեցած Հատուցման դեպքի հիմքով արդեն իսկ վճարված գումարների միջև տարբերությունը վերահաշվարկվում է՝ Խորհրդի սահմանած կարգով: Եթե սույն մասում նշված վերահաշվարկի արդյունքներով պարզվի, որ՝

1) նախկինում տեղի ունեցած Հատուցման դեպքով շահառուին (շահառուներին) վճարված գումարի չափը հավասար է նոր Հատուցման դեպքով վճարման ենթակա գումարի չափին կամ գերազանցում է դրան, ապա նոր Հատուցման դեպքով վճարման ենթակա հատուցման գումարը համարվում է վճարված, և նոր Հատուցման դեպքով վճարում չի կատարվում.

2) նոր Հատուցման դեպքով վճարման ենթակա գումարի չափը գերազանցում է նախկինում տեղի ունեցած Հատուցման դեպքով շահառուին (շահառուներին) արդեն իսկ վճարված գումարի չափը, ապա շահառուին (շահառուներին) վճարվում է նոր Հատուցման դեպքով վճարման ենթակա և

նախկինում տեղի ունեցած Հատուցման դեպքով արդեն իսկ վճարված գումարների միջև տարբերությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հատուցման դեպքի փոփոխություն է համարվում՝

1) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողի՝ սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում նշված ժամկետում և պատճառով մահանալը.

2) զինծառայողին անհայտ բացակայող համարելուց դադարելը և այդ զինծառայողին 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելը.

3) զինծառայողի հաշմանդամության խմբի փոփոխությունը:

Հոդված 5. Հատուցման գումարների վճարման կարգը

1. Հատուցման դեպք տեղի ունենալու պարագայում Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությունը կամ Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը կամ Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը կամ Արցախի Հանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ համապատասխան պետական մարմին) զինծառայողի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելն օրենքով սահմանված կարգով որոշվելու (հաստատվելու) օրվանից մեկ ամսվա ընթացքում Կառավարության սահմանած կարգով՝

1) սույն օրենքի պահանջների համաձայն՝ որոշում է, թե տվյալ Հատուցման դեպքով ով է համարվում շահառու (շահառուներ).

2) Հիմնադրամ է ներկայացնում զինծառայողի, ինչպես նաև շահառուի (շահառուների) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, հանրային ծառայության համարանիշի տվյալները կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, ինչպես նաև Հատուցման դեպքը և սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանգամանքները հաստատող փաստաթղթերը, հատուցման ենթակա գումարի չափը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկությունների հիման վրա Հիմնադրամը՝

1) սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկությունները ստանալու օրվանից հետո՝ Հիմնադրամի գործունեությունը կարգավորող իրավական ակտերով սահմանված ժամկետում՝

ա. սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նշված միանվագ գումարը փոխանցում է շահառուի (շահառուների) համար բացված բանկային հաշվին,

բ. սույն կետի «ա» ենթակետում նշված բանկային հաշվին կատարում է սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նշված ամսական հավասար վճարումներից առաջին վճարումը և սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասում նշված գումարի առաջին վճարումը, եթե այդ գումարը, սույն օրենքի համաձայն, ենթակա է վճարման.

2) մինչև յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը ներառյալ՝ սույն մասի 1-ին կետի «ա» ենթակետում նշված բանկային հաշվին կատարում

է սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նշված ամսական հավասար վճարումներից՝ տվյալ ամսվա համար հավասարաչափ վճարումը և սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասում նշված գումարի՝ տվյալ ամսվա համար վճարումը, եթե այդ գումարը, սույն օրենքի համաձայն, ենթակա է վճարման:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված վճարման ժամկետները Խորհրդի որոշմամբ կարող են հետաձգվել մինչև երեք ամիս ժամկետով՝ էլնելով Հիմնադրամի ֆինանսական կայունությունն ապահովելու անհրաժեշտությունից:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետում նշված բանկային հաշիվը՝

1) շահառուի (շահառուների) անունով Խորհրդի սահմանած կարգով բացում է Հիմնադրամը՝ Խորհրդի սահմանած մրցութային կարգով ընտրված բանկերից մեկում: Սույն կետի համաձայն բացված բանկային հաշվին սույն օրենքի համաձայն փոխանցվող դրամական միջոցների տնօրինման իրավունքը պատկանում է այն շահառուին (շահառուներին), որի (որոնց) անունով այդ բանկային հաշիվը բացվել է.

2) օրենսդրությամբ նախատեսված հատուկ բանկային հաշիվ է:

Հոդված 6. Զինձառայողներին անհայտ բացակայող ճանաչելու դեպքում հատուցման գումարների վճարման առանձնահատկությունները

1. Զինձառայողին անհայտ բացակայող ճանաչելու դեպքում հատուցման գումարները վճարվում են սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով և սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված չափերով:

2. Եթե զինձառայողը դադարել է համարվել անհայտ բացակայող, ապա մինչև զինձառայողին անհայտ բացակայող համարելու դադարումը, սույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, միանվագ և ամսական հավասար վճարների ձևով, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն վճարված գումարները ենթակա չեն վերադարձման, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասում նշված դեպքերի:

3. Եթե զինձառայողը դադարել է համարվել անհայտ բացակայող՝

1) դատարանի կողմից այդ զինձառայողին մահացած ճանաչելու հիմքով, ապա՝

ա. զինձառայողին մահացած ճանաչելու հիմքով սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում նշված միանվագ ձևով գումարներ չեն վճարվում,

բ. ամսական հավասար վճարների ձևով վճարման ենթակա գումարների վճարումը շարունակվում է.

2) այդ զինձառայողին հայտնաբերելու հետևանքով և այդ զինձառայողը ճանաչվել է 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ, ապա 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունենալու հիմքով, սույն օրենքի համաձայն, զինձառայողին վճարման ենթակա գումարը վերահաշվարկվում է՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան.

3) այդ զինձառայողին հայտնաբերելու հետևանքով, և եթե բացակայում են սույն մասի 2-րդ կետում նշված հանգամանքները, ապա հատուցման գումարների, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասում նշված

գումարի վճարումը դադարեցվում է զինծառայողին անհայտ բացակայող համարելուց դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

4. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները չեն կիրառվում, եթե առկա է սույն հոդվածի 5-րդ մասում նշված դեպքերից մեկը:

5. Զինծառայողին անհայտ բացակայող ճանաչելու հիմքով շահառուներին միանվագ և (կամ) հավասարաչափ վճարների ձևով վճարված հատուցման գումարները ենթակա են շահառուների կողմից վերադարձման, եթե պարզվի՝

1) զինծառայողն անհայտ կորել է՝

ա. գորամասը կամ ծառայության վայրը ինքնակամ թողնելու կամ

բ. դասալքության կամ

գ. կամովին գերի հանձնվելու կամ

դ. մարտադաշտն ինքնակամ լքելու հետևանքով, և

2) սույն մասի 1-ին կետում նշված հանգամանքները հաստատվել են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

6. Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտով հատուցման գումարները վերադարձնելու պարտականությունը կարող է համապարտության կարգով դրվել նաև սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում նշված հանգամանքներում անհայտ կորած և կենդանի համարվող զինծառայողի վրա:

7. Հատուցման գումարները վերադարձվում են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտով սահմանված կարգով և ժամկետներում:

Հոդված 7. Հատուցման գումար ստանալու իրավունք ունեցող անձանց որոշումը

1. Զինծառայողի հաշմանդամության դեպքում հատուցման գումարը վճարվում է այդ զինծառայողին կամ իր կողմից համապատասխան պետական մարմին ներկայացված դիմումում նշված անձին, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված դեպքի: Սույն մասում նշված դիմումի ձևը և ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը:

2. Զինծառայողի գոհվելու (մահանալու) կամ զինծառայողին անհայտ բացակայող ճանաչելու դեպքում կամ այն դեպքում, երբ մարտական գործողություններում ստացված վնասվածքների հետևանքով առաջացած մտավոր կամ հոգեկան անկարողության հետևանքով զինծառայողը չի կարող ներկայացնել սույն հոդվածի 1-ին մասում նշված դիմումը՝

1) հատուցման գումարը վճարվում է շահառուներին՝ շահառուների համաձայնությամբ որոշված շահառուի միջոցով.

2) շահառուների միջև համաձայնության բացակայության դեպքում վճարման ենթակա հատուցման գումարը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով բաժանվում է շահառուների միջև և վճարվում է նրանցից յուրաքանչյուրին առանձին:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նշված դեպքում հատուցման գումարը բաժանվում է Կառավարության սահմանած կարգով հետևյալ սկզբունքներով.

1) հատուցման ընդհանուր գումարը բաժանվում է սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված շահառուների թվի վրա.

2) Եթե շահառուներից մեկը մահանում է, ապա այդ անձին վճարման ենթակա հատուցման գումարը չի ներառվում ժառանգական զանգվածի մեջ և հավասարաչափ բաժանվում է մնացած շահառուների միջև:

4. Եթե բացակայում են սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված շահառուները, ապա սույն օրենքով սահմանված հատուցման գումարները չեն վճարվում:

5. Եթե մահանում է սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված միակ շահառուն, ապա այդ շահառուին վճարման ենթակա հատուցման գումարը չի ներառվում ժառանգական զանգվածի մեջ, և այդ գումարի վճարման պարտավորությունը դադարում է:

6. Եթե մահանում է սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետում նշված հիմքով շահառու ճանաչված զինծառայողը, և առկա չեն սույն օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետում նշված հանգամանքները, ապա մահացած զինծառայողի՝ հատուցման գումար ստանալու իրավունքը չի ներառվում ժառանգական զանգվածի մեջ և դադարում է:

7. Սույն հոդվածի դրույթների կիրառումն ապահովելու նպատակով Կառավարությունը սահմանում է շահառուների շրջանակը որոշելու կարգը, շահառուների միջև համաձայնության առկայությունը, բացակայությունը կամ փոփոխությունը հիմնավորվելու կարգը, շահառուների շրջանակում կատարված փոփոխությունների մասին տեղեկությունները համապատասխան պետական մարմիններին և Հիմնադրամին տրամադրելու կարգը:

Հոդված 8. Հարկային արտոնությունները

1. Շահառուներին վճարված հատուցման գումարները ենթակա չեն եկամտային կամ որևէ այլ հարկով հարկման կամ պետական կամ համայնքային բյուջե վճարվող որևէ այլ վճարով նվազեցման:

Գ Լ ՈՒ Խ 3

ԴՐՈՇՄԱՆԻՇԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԸ

Հոդված 9. Սույն գլխում օգտագործվող հասկացությունների նշանակությունը

1. Սույն գլխի դրույթների կիրառման նպատակով՝

1) դրոշմանիշ է համարվում Հիմնադրամի՝ էլեկտրոնային եղանակով թողարկված պիտակը.

2) ֆիզիկական անձի ռեզիդենտությունը, ոչ ռեզիդենտությունը, ինչպես նաև Արցախի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտը որոշվում են Արցախի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն.

3) սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված ֆիզիկական անձանց համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային ամիսը, իսկ անհատ ձեռնարկատերերի համար՝ օրացուցային տարին.

4) հարկային գործակալ է համարվում սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված ֆիզիկական անձանց՝ նույն

կետերում նշված հիմքերով եկամուտ վճարող իրավաբանական անձը (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձի հիմնարկը, օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը), անհատ ձեռնարկատերը, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը, հիմնարկը:

Հոդված 10. «Դրոշմանիշային վճար» հասկացությունը

1. Դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով Արցախի Հանրապետության պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

Հոդված 11. Դրոշմանիշային վճար վճարողները

1. Դրոշմանիշային վճար պարտավոր են վճարել (դրոշմանիշային վճար վճարողներ են համարվում)

1) աշխատանքային պայմանագրով Արցախի Հանրապետության տարածքում կամ Արցախի Հանրապետության տարածքից դուրս աշխատող Արցախի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց.

2) աշխատանքային պայմանագրով Արցախի Հանրապետության տարածքում աշխատող Արցախի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող (բացառությամբ Արցախի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացի և քաղաքացիություն չունեցող անձ հանդիսացող աշխատողների) ֆիզիկական անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց.

3) Արցախի Հանրապետությունում հաշվառված և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերը.

4) աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերով Արցախի Հանրապետության տարածքում կամ Արցախի Հանրապետության տարածքից դուրս եկամուտ ստացող՝ Արցախի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց.

5) աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերով Արցախի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող՝ Արցախի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող (բացառությամբ Արցախի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացի և քաղաքացիություն չունեցող անձ հանդիսացող աշխատողների) ֆիզիկական անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց:

2. Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճար չեն վճարում՝

1) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված այն անձինք, որոնք չունեն տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ստացման ենթակա (ստացված) եկամուտ:

2) սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված այն անձինք, որոնք տվյալ հաշվետու տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեությունից կամ այլ հիմքով եկամուտներ չեն ստացել:

3. Դրոշմանիշային վճար չեն վճարում սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 2-րդ կետում նշված այն անձինք, որոնք աշխատում են միայն մեկ աշխատանքային պայմանագրով և այդ աշխատանքային պայմանագրով հարկերը և դրոշմանիշային վճարը նվազեցնելուց հետո ստացվող աշխատավարձը չի գերազանցում Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը: Սույն մասում նշված անձանց փոխարեն դրոշմանիշային վճարները վճարվում են՝

1) Արցախի Հանրապետության պետական մարմիններում աշխատող անձանց փոխարեն՝ Արցախի Հանրապետության պետական բյուջեից:

2) տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող անձանց փոխարեն՝ համապատասխան համայնքի բյուջեից:

3) այլ գործատուների մոտ աշխատող անձանց փոխարեն՝ տվյալ անձանց աշխատավարձ վճարող գործատուի կողմից՝ նրա միջոցների հաշվին:

4. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Հիմնադրամի միջոցով կամ ինքնուրույն, իր նախընտրած չափով վճարելու դրոշմանիշային վճար դրա համար անհրաժեշտ քանակի էլեկտրոնային եղանակով դրոշմանիշեր ձեռք բերելու միջոցով (կամավոր նվիրաբերություն): Հիմնադրամն իրավունք ունի կազմակերպելու հանգանակություններ կամավոր նվիրաբերությունները քաջալերելու նպատակով:

5. Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող կամ զոհված (մահացած) զինծառայողի ծնողը, ամուսինը և (կամ) զավակը (զավակները) իրավունք ունեն յուրաքանչյուր տարվա առաջին երկու ամսվա ընթացքում դիմում ներկայացնելու Հիմնադրամ՝ դիմումը ներկայացնելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում իրենց վճարած (իրենց եկամուտներից հարկային գործակալի պահած) դրոշմանիշային վճարի գումարներն ամբողջությամբ կամ մասնակիորեն վերադարձնելու պահանջով: Սույն մասում նշված ժամկետից հետո դիմում ներկայացվելու դեպքում Հիմնադրամը դիմումը մերժում է՝ այդ մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնելով դիմումատուին: Դիմումին կից ներկայացվում են համապատասխան պետական մարմնի կողմից տրված զինծառայողի՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու կամ զոհված (մահացած) լինելու մասին տեղեկանքը, ինչպես նաև դիմումը ներկայացնելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին տեղեկանքը: Սույն մասի համաձայն՝ Հիմնադրամ ներկայացվող դիմումի, համապատասխան պետական մարմնի և հարկային մարմնի կողմից տրամադրվող տեղեկանքների ձևերը, ինչպես նաև տեղեկանքների տրամադրման և դրոշմանիշային վճարի վերադարձման կարգը սահմանում է Կառավարությունը:

6. Սույն հոդվածի 5-րդ մասում նշված դիմումը և կից տեղեկանքները Հիմնադրամում մուտք գործելու օրվանից հետո՝ Հիմնադրամի գործունեությունը կարգավորող իրավական ակտերով սահմանված

Ժամկետում, Հիմնադրամը դիմումում նշված բանկային հաշվին է փոխանցում դիմումին կից ներկայացված՝ վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին տեղեկանքում նշված գումարը:

7. Սույն մասում նշված՝ համապատասխան պետական մարմինների կողմից տրամադրման ենթակա տեղեկանքը դիմելու օրվանից հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, տրամադրում է՝

1) զինծառայողի ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու վերաբերյալ տեղեկանքը՝ զինծառայողի զորակոչի իրականացրած զինվորական կոմիսարիատը.

2) զինծառայողի գոհված (մահացած) լինելու վերաբերյալ տեղեկանքը՝ այն համապատասխան պետական մարմինը, որն իրականացնում է գոհված (մահացած) զինծառայողի հաշվառումը:

8. Սույն մասում նշված՝ վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին տեղեկանքը դիմելու օրվանից հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, տրամադրում է՝

1) համապատասխան պետական մարմիններում աշխատանքային պայմանագրով աշխատող կամ համապատասխան պետական մարմիններից աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրով եկամուտ ստացող անձանց մասով՝ այն համապատասխան պետական մարմինը, որտեղ աշխատանքային պայմանագրով աշխատում է կամ որից աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրով եկամուտ է ստանում տվյալ անձը.

2) սույն մասի 1-ին կետում չնշված անձանց մասով՝ հարկային մարմինը:

Հոդված 12. Դրոշմանիշային վճարների չափը

1. Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը վճարում են 1 000 ՀՀ դրամ գումարի չափով, իսկ անհատ ձեռնարկատերերը՝ 12 000 ՀՀ դրամ գումարի չափով:

2. Եթե նույն ֆիզիկական անձը միաժամանակ աշխատում է աշխատանքային պայմանագրով և (կամ) հանդիսանում է անհատ ձեռնարկատեր և (կամ) աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրով ստանում է եկամուտ, ապա այդ ֆիզիկական անձն իրավունք ունի սույն օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում դիմելու Հիմնադրամ՝ սույն մասում նշված՝ մեկից ավելի հիմքով վճարված դրոշմանիշային վճարը հետ ստանալու համար:

3. Եթե նույն ֆիզիկական անձը նույն հաշվետու ժամանակաշրջանում եկամուտներ է ստանում տարբեր անձանց հետ կնքված՝ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական մեկից ավելի պայմանագրով, ապա այդ ֆիզիկական անձն իրավունք ունի սույն օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում դիմելու Հիմնադրամ՝ սույն մասում նշված՝ մեկից ավելի հիմքով վճարված դրոշմանիշային վճարը հետ ստանալու համար:

4. Եթե նույն ֆիզիկական անձն աշխատանքային պայմանագրով աշխատում է մեկից ավելի գործատուի մոտ, ապա այդ ֆիզիկական անձն իրավունք ունի սույն օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում դիմելու Հիմնադրամ՝ սույն մասում նշված՝ մեկից ավելի հիմքով վճարված դրոշմանիշային վճարը հետ ստանալու համար:

5. Սույն հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված դեպքերում Հիմնադրամը դրոշմանիշային վճարը վերադարձնում է սույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետներում:

Հոդված 13. Դրոշմանիշային վճարների վճարումը

1. Եթե սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված անձինք եկամուտներ են ստանում հարկային գործակալից, ապա այդ անձինք դրոշմանիշային վճարը վճարում են բացառապես հարկային գործակալի միջոցով:

2. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված անձինք, ինչպես նաև սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված՝ հարկային գործակալ չհամարվող անձից եկամուտներ ստացող անձինք դրոշմանիշային վճարը վճարում են ինքնուրույն:

3. Սույն օրենքի 11-րդ հոդվածում նշված անձանց կողմից տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում նշված չափով դրոշմանիշային վճար կատարելու պարտականությունը համարվում է կատարված, իսկ համապատասխան չափով դրոշմանիշեր՝ ձեռք բերված, այդ անձանց կողմից հարկային գործակալի միջոցով կամ ինքնուրույն սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում նշված գումարը պետական բյուջե փոխանցելու օրվանից:

4. Դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը սահմանված կարգով դատարան է ներկայացնում հայցադիմում՝ դրոշմանիշային վճար վճարողից (եթե դրոշմանիշային վճարը, սույն օրենքի համաձայն, պետք է կատարվի հարկային գործակալի միջոցով, ապա հարկային գործակալից) գույքի բռնագանձման համար: Մինչև գումարի բռնագանձման վերաբերյալ դատարան հայցադիմում ներկայացնելը պարտավոր անձի գույքի վրա հարկային մարմինը կարող է դնել արգելանք կամ կիրառել սահմանափակում՝ Արցախի Հանրապետության հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

Հոդված 14. Հարկային գործակալի միջոցով դրոշմանիշային վճար վճարելը

1. Հարկային գործակալները յուրաքանչյուր ամիս սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված չափերով հաշվարկում են տվյալ ամսվա համար դրոշմանիշային վճարների չափը հիմք ընդունելով տվյալ ամսվա համար հարկային մարմիններ ներկայացված եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում ներառված այն վարձու աշխատողների թիվը, որոնց համար տվյալ ամսում հաշվեգրված են եկամուտներ:

2. Յուրաքանչյուր ամսվա համար սույն հոդվածի 1-ին մասի համաձայն հաշվարկված դրոշմանիշային վճարի գումարը հարկային գործակալները

պետական բյուջե են փոխանցում մինչև դրոշմանիշային վճարների չափի հաշվարկման ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

3. Յուրաքանչյուր անձի մասով տվյալ ամսվա համար հաշվարկված դրոշմանիշային վճարի գումարը հարկային գործակալը պահում է այդ հարկային գործակալից տվյալ անձի կողմից տվյալ ամսում ստացման ենթակա հաշվեգրված եկամուտներից:

4. Հարկային գործակալների կողմից հարկային մարմիններ ներկայացված եկամտային հարկի ճշտված ամսական ամփոփ հաշվարկում ներառված վարձու աշխատողների թվի նվազեցումը դրոշմանիշային վճարի հաշվարկման համար հաշվի չի առնվում:

Հոդված 15. Դրոշմանիշային վճարը ինքնուրույն վճարելը

1. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված՝ հարկային գործակալ չհամարվող անձից եկամուտներ ստացող անձինք տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճարը վճարում են ինքնուրույն մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

2. Դրոշմանիշային վճարներն ինքնուրույն կատարող՝ սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված անձինք դրոշմանիշային վճարը կատարում են եկամտային հարկի վճարման ժամկետներում՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված տարեկան եկամուտների հաշվարկում եկամուտներ արտացոլված լինելու հանգամանքը:

Հոդված 16. Դրոշմանիշային վճար կատարած անձանց ցուցակները և փոխանցման հանձնարարական ներկայացնելը, պետական բյուջեից Հիմնադրամին դրամական միջոցների հատկացումը

1. Հարկային մարմինը՝

1) յուրաքանչյուր հարկային գործակալի կողմից եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկի ներկայացման և դրա հիման վրա դրոշմանիշային վճարի ամբողջ գումարի վճարման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամ է փոխանցում տվյալ հարկային գործակալի այն աշխատողների ցուցակը, որոնց համար տվյալ հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են դրոշմանիշային վճարներ:

2) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճարներ ինքնուրույն վճարողների համար սույն օրենքով սահմանված դրոշմանիշային վճար վճարելու վերջնաժամկետից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Հիմնադրամ է փոխանցում տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճար ինքնուրույն վճարողների ցուցակը, որոնք տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ կատարել են դրոշմանիշային վճարներ:

3) դրոշմանիշային վճարներ կատարող անձանց կողմից (սույն օրենքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի միջոցով) տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճարի ամբողջ գումարը վճարելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, գանձապետարան է ներկայացնում տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար փոխանցման

հանձնարարական (այսուհետ՝ Փոխանցման հանձնարարական)՝ սույն կետում նշված անձանց վճարած դրոշմանիշային վճարի գումարներից Հիմնադրամ գումար փոխանցելու վերաբերյալ՝ նշելով փոխանցման ենթակա գումարը: Ընդ որում, տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմնի կողմից ներկայացվող Փոխանցման հանձնարարականում հարկային մարմինը նշում է վճարված դրոշմանիշային վճարի այն գումարը, որը հավասար է դրոշմանիշային վճարներ կատարող անձանց՝ դրոշմանիշային վճարների կատարման գծով տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար պարտավորության չափին:

2. Գանձապետարանը Փոխանցման հանձնարարականը ստանալու օրվանից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, Հիմնադրամի հատուկ հաշվին է փոխանցում Փոխանցման հանձնարարականում նշված գումարը:

3. Եթե տվյալ հարկային գործակալի կամ դրոշմանիշային վճարի վճարումն ինքնուրույն կատարող անձի կողմից տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար փաստացի վճարված դրոշմանիշային վճարների գումարի չափը գերազանցում է Փոխանցման հանձնարարականում նշված գումարի չափը, ապա գանձապետարանը տվյալ հարկային գործակալի (դրոշմանիշային վճարի վճարումն ինքնուրույն կատարող անձի) կողմից փաստացի վճարված դրոշմանիշային վճարի՝ Փոխանցման հանձնարարականում նշված գումարի չափը գերազանցող գումարի կարգավիճակը որոշում է Կառավարության սահմանած կարգով:

4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ցուցակների և Փոխանցման հանձնարարականի ձևը, հարկային մարմնի կողմից այդ փաստաթղթերը համապատասխանաբար Հիմնադրամին և գանձապետարանին փոխանցելու և տրամադրելու կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 17. Դրոշմանիշների թողարկումը

1. Դրոշմանիշները թողարկում է Հիմնադրամը՝ էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային համակարգի միջոցով:

2. Թողարկվող դրոշմանիշները կարող են ունենալ տարբեր անվանական արժեք:

3. Դրոշմանիշների թողարկման, հաշվառման, ձեռքբերման կարգը, թողարկման ենթակա դրոշմանիշների անվանական արժեքը, ինչպես նաև դրոշմանիշների թողարկման համար անհրաժեշտ էլեկտրոնային համակարգի գործունեության կարգը սահմանում է Խորհուրդը:

Հոդված 18. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 1-ին և 2-րդ գլուխների գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 28

Ստեփանակերտ

ՀՕ-78

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի հունիսի 16-ի ՀՕ-23 օրենքի **12-րդ հոդվածում՝**

1) 1-ին պարբերությունում վերջակետը փոխարինել ստորակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

«դրոշմանիշային վճար:»:

2) 2-րդ պարբերությունում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Սույն պարբերության դրույթը չի տարածվում դրոշմանիշային վճարի վրա:»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Դրոշմանիշային վճար վճարողների շրջանակը, վճարի չափը, վճարի հաշվարկման, վճարման, գանձման կարգն ու ժամկետները, ինչպես նաև վճարի գծով արտոնությունները սահմանվում են «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 28
Ստեփանակերտ
ՀՕ-79-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

«ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 18-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34.1-ին հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մաս.

«6. Սույն հոդվածի 1-ին մասը չի տարածվում «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքի համաձայն հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց վրա: «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքի համաձայն՝ հատուցման գումարի վճարումը դադարեցնելուց հետո սույն մասում նշված անձինք ձեռք են բերում սույն հոդվածով սահմանված պարգևավճարի իրավունք:»:

Հոդված 2. Օրենքի 39-րդ հոդվածում՝

1) 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Զինծառայողները ենթակա են զինվորական ծառայության ընթացքում կամ ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ զոհվելու (մահանալու) դեպքերից պարտադիր պետական ապահովագրության:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերություն.

«Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի վրա:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա, իսկ 2-րդ հոդվածի 2-րդ մասի գործողությունը՝ 2017 թվականի փետրվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 28
Ստեփանակերտ
ՀՕ-80-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի ՀՕ-94 օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ թ⁷-րդ կետ.

«թ⁷) դրոշմանիշային վճարները.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 28
Ստեփանակերտ
ՀՕ-81-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2011 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-60-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքի համաձայն հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց վրա: «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքի համաձայն՝ հատուցման գումարի վճարումը դադարեցնելուց հետո սույն մասում նշված անձինք ձեռք են բերում սույն հոդվածով սահմանված կենսաթոշակի իրավունք:»:

Հոդված 2. Օրենքի 22-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքի համաձայն հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց վրա: «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքի համաձայն՝ հատուցման գումարի վճարումը դադարեցնելուց հետո սույն մասում նշված անձինք ձեռք են բերում սույն հոդվածով սահմանված կենսաթոշակի իրավունք:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 28
Ստեփանակերտ
ՀՕ-82-

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ԵԿԱՄՏԱՑԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՑԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-86-Ն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետում վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 33-րդ կետ.

«33) «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Արցախի Հանրապետության օրենքի հիման վրա շահառուներին վճարվող հատուցման գումարները:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 28
Ստեփանակերտ
ՀՕ-83-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

«ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վիճակախաղերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2004 թվականի սեպտեմբերի 15-ի ՀՕ-132 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում՝

1) 8-րդ կետի «Ընդ որում,» բառերից հետո հանել «տոտալիզատորում» բառը, իսկ «սարքավորման» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ վիճակախաղի էլեկտրոնային տոմս)» բառերը.

2) 9-րդ կետի «գործընթացը» բառից հետո հանել «և դակված է, կամ անկյունը կտրված է այնպես, որ վնասված չեն տոմսի համարը, սերիան, խաղարկության համարը և խաղարկությանը մասնակցող դաշտերը» բառերը:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝ «ա» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «ա՛»-ին կետ.

«ա՛) խաղարկությամբ վիճակախաղի դեպքում ապահովում է չբաշխված շահումային ֆոնդի տեղափոխումը հաջորդող խաղարկություններ (առավելագույնը մեկ օրացուցային տարվա ընթացքում)՝ ավելացնելով այն սույն մասի «ա» կետի համաձայն ձևավորված շահումային ֆոնդին.»

2) 6-րդ մասում «թերթում» բառը փոխարինել «իր կայքում» բառերով:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «բ» կետի «առնվազն 1000 տպաքանակ ունեցող թերթում» բառերը փոխարինել «կազմակերպչի կայքում» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մաս.

«10. Վիճակախաղի էլեկտրոնային տոմսերի մարման և պահպանման կարգի առանձնահատկությունները սահմանվում են Արցախի Հանրապետության կառավարության կողմից:»:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ա» և «բ» ու 2-րդ մասի «ա» և «բ» կետերում «փաստաթղթային» բառից հետո լրացնել «կամ էլեկտրոնային» բառերը.

2) 7-րդ մասում «Կազմակերպիչը» բառից հետո լրացնել «փաստաթղթային կամ էլեկտրոնային տեսքով» բառերը:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «զ» կետում «քանակի» բառից հետո լրացնել «և չափի» բառերը.

2) 2-րդ մասի «ե» կետում «կարգին» բառից հետո լրացնել «, կամ հղումը կազմակերպչի կայքին՝ որտեղ մասնակիցները կարող են ծանոթանալ շահումը որոշելու կարգին» բառերը.

3) 2-րդ մասի «զ» կետում «Ժամկետները» բառից հետո լրացնել «, կամ հղումը կազմակերպչի կայքին՝ որտեղ մասնակիցները կարող են ծանոթանալ շահումների վճարման վայրին, կարգին և ժամկետներին» բառերը:

Հոդված 6. Օրենքի 9-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մաս.

«1.1. Վիճակախաղի կազմակերպման լիցենզիան տրամադրվում է հայտը լիազոր մարմին պատշաճ կերպով ներկայացնելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն մասով սահմանված ժամկետը լիազոր մարմնի որոշմամբ կարող է երկարաձգվել ևս 23 աշխատանքային օրով, եթե հայտին կից ներկայացված փաստաթղթերը պարունակում են այնպիսի տեղեկություններ, որոնք կարիք ունեն լրացուցիչ ուսումնասիրության: Երկարաձգման որոշման մասին պատշաճ ձևով տեղեկացվում է հայտատուն:»:

Հոդված 7. Օրենքի ամբողջ տեքստում, բացառությամբ 5-րդ հոդվածի, 9-րդ հոդվածի 1-ին մասի և 14-16-րդ հոդվածների, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 28
Ստեփանակերտ
ՀՕ-84-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 19-ի ՀՕ-27 օրենքի 86³-րդ
հոդվածի 1-ին մասում «20» թիվը փոխարինել «10» թվով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-
ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 28
Ստեփանակերտ
ՀՕ-85-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հարկային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2002 թվականի սեպտեմբերի 14-ի ՀՕ-5 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 4-րդ մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Նախագահը» բառերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետը՝ հարկային մարմնի ղեկավարի ներկայացմամբ» բառերը՝ «Արցախի Հանրապետության կառավարությունը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Նախագահը» բառերով:

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. «Արցախի Հանրապետության օրինակելի հարկային ծառայող» կրճքանշանով պարգևատրումն իրականացնում է հարկային ծառայողին տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (մարմինը):»:

Հոդված 4. Օրենքի տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով՝ բացառությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքով», «Դրամարկղային գործառնությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչության աշխատողների դասային և հատուկ կոչումներ սահմանելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերի:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 28
Ստեփանակերտ
ՀՕ-86-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2000 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-119 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Արցախի Հանրապետության տարածքում իրենց լիազորությունների շրջանակներում ստուգումներ իրականացնելու իրավասությամբ օժտված են՝

1) Արցախի Հանրապետության առողջապահության նախարարությունը.

2) Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունը.

3) Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությունը.

4) Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը.

5) Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունը.

6) Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը.

7) Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունը.

8) Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը.

9) Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը («Հարկային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում՝ հարկային մարմինը).

10) Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը.

11) Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը.

12) Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը.

13) Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը.

14) լիցենզավորող պետական մարմինները:

Պետական մարմինների կամ դրանց լիազորությունների փոփոխությունների դեպքում ստուգում իրականացնող նշված մարմինների լիազորություններն իրականացնում են դրանց իրավահաջորդ կամ համապատասխան լիազորություն ունեցող մարմինները:»:

Հոդված 2. Օրենքի 2.1-ին հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությունից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի համաձայնությամբ» բառերը:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի երկրորդ պարբերությունում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական ծառայության» բառերը փոխարինել «Հարկային մարմնի» բառերով.

2) 3.1-ին մասի 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետից» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Նախագահից» բառերով:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածի առաջին պարբերությունում և երկրորդ պարբերության «գ» կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի գրավոր հանձնարարությամբ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Նախագահի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ» բառերով:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի» բառերը փոխարինել «հարկային մարմնի ղեկավարի» բառերով:

Հոդված 6. Օրենքի վերնագրում, տեքստում, հավելվածներ 2-ում, 2.1-ում և 3-ում, բացառությամբ «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված ժամկետում» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1998թ. օգոստոսի 18-ի թիվ 163 որոշմամբ հաստատված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների, անհատ ձեռներեց հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների ստուգումների կազմակերպման և անցկացման կանոնակարգը» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 28
Ստեփանակերտ
ՀՕ-87-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2017 թվականի
դեկտեմբերի 21-ին

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2004 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-104 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետում «վարչապետի» բառը փոխարինել «Ազգային ժողովի նախագահի, պետական նախարարի» բառերով:

Հոդված 2. Օրենքի տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով՝ բացառությամբ ««Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Զենքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», ««Մնանկության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի» և ««Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերի:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 28
Ստեփանակերտ
ՀՕ-88-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2017թ.

N 340-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 23-Ի

N 384-Ա ՈՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 959-Ն

ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ

ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Անասնաբուժության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետին, «Մանրամթերքի անվտանգության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, «Մանրամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին, «Բուսասանիտարիայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Արցախի Հանրապետությունում անասնաբուժության, սննդամթերքի և կերի անվտանգության, բուսասանիտարիայի բնագավառներում՝

1) քաղաքականություն մշակող և ծառայություններ մատուցող Արցախի Հանրապետության կառավարության լիազորված պետական մարմին ճանաչել Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը.

2) վերահսկողություն իրականացնող Արցախի Հանրապետության կառավարության լիազորված պետական մարմին ճանաչել Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 23-ի «Արտադրության և շրջանառության բոլոր փուլերում սննդամթերքի և սննդային հավելումների անվտանգության պետական վերահսկողությունն իրականացնող լիազոր մարմիններ ճանաչելու մասին» N 384-Ա և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի «Մանրամթերքի անվտանգության, անասնաբուժության, բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի բնագավառներում պետական կառավարումն իրականացնող լիազորված մարմնի իրավասությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության

նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը վերապահելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 23-ի N384-Ա և 2003 թվականի ապրիլի 15-ի N98 որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 959-Ն որոշումները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՑԱՆ